



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

7 մարտի 2017 թվականի

թիվ 2

քաղ. Բիշքեկ

### **Եվրասիական տնտեսական միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների եւ դրա օգտագործմանն ուղղված միջոցների մասին**

Ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական միությունում (այսուհետ՝ Միություն) տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների եւ դրա օգտագործմանն ուղղված միջոցների մասին զեկույցը (այսուհետ՝ զեկույց)՝

1. Հանձնարարել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին եւ Միության անդամ պետություններին փոխգործակցության շրջանակներում հաշվի առնել զեկույցի դրույթները:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ շարունակել Միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների վերլուծության եւ Միության անդամ պետությունների կողմից իրագործվող, նշված ներուժի օգտագործմանն ուղղված միջոցների դիտանցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում Միության պաշտոնական կայքում դրա հրապարակման օրվանից:

**Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝**

<b>Հայաստանի</b>	<b>Բելառուսի</b>	<b>Ղազախստանի</b>	<b>Ղրղզստանի</b>	<b>Ռուսաստանի</b>
<b>Հանրապետությունից՝</b>	<b>Հանրապետությունից՝</b>	<b>Հանրապետությունից՝</b>	<b>Հանրապետությունից՝</b>	<b>Դաշնությունից՝</b>

Զեկույց

«Եվրասիական տնտեսական միությունում տնտեսության`  
ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները  
եւ դրա օգտագործմանն ուղղված միջոցները»

Մոսկվա

2017

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերլուծական ամփոփագիր .....	3
Ներածություն .....	17
1. Համագործակցության ինտեգրացիոն առաջնահերթություններ սահմանելու եւ տնտեսության ոլորտներում ինտեգրացիոն ներուժը գնահատելու միջազգային փորձը.....	21
2. Միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների որոշման վերաբերյալ առաջարկություններ եւ դրանց ապրոքացիայի արդյունքները .....	34
2.1. Տնտեսության՝ բարձր արդիականություն եւ (կամ) Միության շրջանակներում կոոպերացիայի հաշվին ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտները .....	38
2.2. Տնտեսության՝ երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ներուժ ունեցող ճյուղերը.....	50
2.3. Տնտեսության՝ երկրի մասնագիտացման հաշվին ներքին շուկա ապրանքների եւ ծառայությունների մատակարարումների աճի հեռանկարներ եւ Միությունում մրցակցային առավելություններ ունեցող ոլորտները .....	62
2.4. Միության «Ապագայի ճյուղերը» .....	75
2.5. Տնտեսության ոլորտները, որտեղ ինտեգրումը բազմապատկական էֆեկտ է ապահովում անդամ պետությունների եւ առհասարակ Միության համար.....	80
2.6. Տնտեսության՝ Միության ներսում եւ միջազգային արտադրական շղթաներում ընդգրկվելու ներուժ ունեցող ոլորտները .....	86
2.7 Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտներն ու պետական մասնակցությամբ ընկերությունների բարձր մասնաբաժին ունեցող ոլորտները.....	91
3. Անդամ պետություններում եւ առհասարակ Միությունում տնտեսության՝ ամենամեծ ընդհանուր ինտեգրացիոն ներուժն ունեցող ոլորտները .....	94
Եզրակացություն.....	115
Հավելված 1. Անդամ պետություններում եւ, ընդհանուր առմամբ, Միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների որոշման մանրամասնեցված արդյունքները .....	119
Հավելված 2. Միության ինտեգրացիոն ներուժի իրագործմանն ուղղված միջոցների ցանկ .....	187
Հավելված 3. Ընդհանուր առմամբ Միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների ցանկ .....	194

## Վերլուծական ամփոփագիր

«Եվրասիական տնտեսական միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները եւ դրա օգտագործմանն ուղղված միջոցները» զեկույցը (այսուհետ՝ Ձեկույց) նախապատրաստվել է ի կատարումն «Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 28 որոշման 3-րդ կետի:

Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների (այսուհետ համապատասխանաբար՝ ԵԱՏՄ, Միություն, Հիմնական ուղղություններ) մշակման եւ հետագա իրագործման հիմքում դրվել են միմյանց փոխլրացնող երկու սկզբունք՝

1) Տնտեսական զարգացման՝ անդամ պետությունների համար ընդհանուր երկարաժամկետ ուղղությունների ընտրություն, որտեղ ինտեգրացիոն միջոցների ու գործողությունների իրագործումը կազդի անդամ պետությունների տնտեսությունների մրցունակության վրա: Տվյալ մոտեցումը ենթադրում էր Հիմնական ուղղությունների մշակում ոչ թե ըստ տնտեսության յուրաքանչյուր ոլորտում (հատվածում, ճյուղում) երկարաժամկետ ինտեգրացիոն միջոցների նկարագրությամբ ճյուղային սկզբունքի, այլ ըստ այն պայմանների սահմանման սկզբունքի, որոնք «համընդհանուր» են Միության անդամ պետությունների տնտեսության ցանկացած ոլորտի ինտեգրացիոն զարգացման նպատակների համար:

2) Տնտեսության այն ոլորտներում (ճյուղերում, հատվածներում) ինտեգրացիոն համագործակցության չափորոշիչների սահմանում, որտեղ լրացուցիչ ինտեգրացիոն էֆեկտ ստանալու հավանականությունն ամենամեծն է, իսկ էֆեկտի չափը կարելու է բոլոր անդամ պետությունների (անդամ պետությունների մեծ մասի) տնտեսությունների համար: Տվյալ խնդրի լուծման համար փաստաթղթում սահմանվել են տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների ընտրության չափորոշիչներ, որոնք համապատասխանում են ինտեգրացիոն ներուժի տարբեր տեսակներին:

Համապատասխանաբար, Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ անդամ պետությունների հետ համատեղ, հանձնարարվել է նախապատրաստել առաջարկություններ տնտեսության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով նախատեսված, ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները եւ ինտեգրացիոն ներուժի օգտագործմանն ուղղված միջոցներ սահմանելու մասին:

Արդյունքում մշակվել եւ փորձարկվել են տնտեսության՝ Միությունում ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները սահմանելու յոթ մեթոդիկաներ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է Միության տնտեսական զարգացման հիմնական ուղղություններում կանոնակարգված՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող տնտեսության ոլորտները սահմանելու չափորոշիչներին:

*1. Տնտեսության՝ բարձր արդիականություն եւ (կամ) Միության շրջանակներում կոռպերացիայի հաշվին ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտները*

Տնտեսության ոլորտում (կոնկրետ ապրանքի կամ ծառայության մասով) առկա է ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ, եթե պետության՝ որպես Միության անդամի ներմուծման փոխարինման ներուժը (դիտվում է միայն ներմուծումը երրորդ երկրներից) ավելի փոքր է, քան առանձին երկրի ներմուծման փոխարինման ներուժը: Սա վկայում է այն մասին, որ ներմուծումից կախվածության նվազեցման գործում դրական ներդրում ունի անդամ պետությունների հետ անմիջապես փոխադարձ առեւտուրը:

Մեթոդիկայի փորձարկման արդյունքները ցույց են տվել, որ ինտեգրացիայի պայմաններում երրորդ երկրներից ապրանքների եւ ծառայությունների ներմուծման փոխարինման ներուժը *10 տոկոսով* գերազանցում է «առանց ինտեգրացիայի» պայմաններում անդամ պետությունների ներմուծման փոխարինման ազգային համընդհանուր ներուժը: Սահմանվել են Միությունում ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ ունեցող *274 ապրանքային դիրքեր* եւ *ծառայությունների 4 կատեգորիա*:

Ապրանքների սեզմենտում *Միությունում* ներմուծման փոխարինման ամենամեծ հեռանկարներն ունեն՝

1) *Արդյունաբերական նշանակության ապրանքները՝* թեթեւ մարդատար ավտոմոբիլներ, շինարարական տեխնիկա (բուլդոզերներ, էքսկավատորներ, ուղեհարթիչներ), շարժիչային տրանսպորտային միջոցների մասեր եւ պարագաներ, հաշվիչ մեքենաներ, ռետինի եւ պլաստմասսաների մշակման սարքավորումներ եւ այլն

2) *Թերապեւտիկ եւ պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման դեղամիջոցները*

*Գյուղատնտեսական արտադրանք եւ պարեն*, որի ներմուծման փոխարինման արդիականությունը նշվում է բոլոր անդամ պետությունների կողմից, ներկայացված է ապրանքների մեծ խմբով, որոնք, ըստ ներմուծման փոխարինման ծավալների, որպես կանոն, ընդգրկված են ցանկի մեջտեղում կամ վերջում: Մասնավորապես, Միությունում ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ վերհանվել է խաղողի գինիների, մրգային հյութերի, լոլիկի, թարմ եւ պատրաստված բանջարեղենի, խոզի մսի, ընտանի թռչնի մսի եւ այլ ապրանքային դիրքերի համար:

Ծառայությունների ոլորտում բոլոր անդամ պետությունների համար ներմուծման փոխարինման ամենամեծ ինտեգրացիոն ներուժն ունեն *տրանսպորտային ծառայությունները՝* երրորդ երկրներից ներմուծվող տրանսպորտային ծառայությունների ծավալի մինչեւ 20 տոկոսի չափով:

2. *Տնտեսության՝ երրորդ երկրներ իրականացվող արտահանումն ավելացնելու եւ բազմազանեցնելու ներուժ ունեցող ոլորտները*

Տնտեսության ոլորտում (ապրանքների կամ ծառայությունների խմբի մասով) առկա է երրորդ երկրներ արտահանման մեծացման ինտեգրացիոն ներուժ, եթե պետության՝ որպես Միության անդամի արտահանման ներուժը գերազանցում է տվյալ ոլորտի համար արտահանման մեծացման եւ բազմազանեցման ազգային

ներուծը: Սա նշանակում է, որ Միությունում մասնակցության հաշվին երկիրը կարող է ուժեղացնել իր արտահանման ներուժը եւ ավելացնել կոնկրետ ապրանքի եւ (կամ) ծառայության մատակարարումները երրորդ երկրներ:

Մեթոդիկայի փորձարկման արդյունքները ցույց են տվել, որ Միության շրջանակներում արտահանման մեծացման եւ բազմազանեցման ներուժը, որին կարելի է հասնել ինտեգրացիոն համագործակցության հաշվին, *22 տոկոսով* գերազանցում է ազգային համընդհանուր ներուժը: Սահմանվել են երրորդ երկրներ արտահանման աճի ինտեգրացիոն ներուժ ունեցող *276 ապրանքային դիրքեր* եւ *ծառայությունների 1 կատեգորիա*:

Ապրանքների սեգմենտում արտահանման մեծացման ամենամեծ հեռանկարներն ունեն՝

1) *Քիմիական ճյուղի արտադրանքը՝* անվադողեր եւ դողածածկեր, էթիլենի պոլիմերներ, ացիլլիկ ածխաջրածիններ, պլաստմասսայե սալիկներ, ժապավեններ եւ արտադրատեսակներ

2) *Մեքենաշինական արտադրանքը՝* բացառությամբ տրանսպորտային միջոցների՝ մոնիտորներ, պրոյեկտորներ, ծորակներ, կափույրներ

3) *Մետաղագործական արտադրանքը՝* երկաթից եւ պողպատից ձողեր

4) *Մարդատար ավտոմոբիլները*

Մեթոդիկայի պահանջներին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից անցկացվել է երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ բազմազանեցման ներուժ ունեցող տնտեսության ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության ստուգում: Ըստ դրա արդյունքների՝ առաջարկվել է վերջնական ցանկը լրացնել հետեւյալ ապրանքային դիրքերով՝

270900 «Հում նավթ եւ հում նավթամթերքներ՝ ստացված բիտումային հանքանյութերից».

2710 «Նավթ եւ նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից՝ բացառությամբ հում նավթի ու նավթամթերքների. այլ տեղում չնշված կամ



չներառված արտադրանք, որը պարունակում է 70 տոկոս կամ ավելի զանգվածային բաժին նավթ կամ նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից, ընդ որում՝ այդ նավթամթերքներն արտադրանքի հիմնական բաղադրիչներն են. բանեցված նավթամթերքներ».

2711 «Նավթային գազեր եւ գազանման այլ ածխաջրածիններ»:

*3. Տնտեսության՝ Միությունում մրցակցային առավելություններ եւ երկրի մասնագիտացման հաշվին ներքին շուկա ապրանքների եւ ծառայությունների մատակարարումների մեծացման հեռանկարներ ունեցող ոլորտները*

Մեթոդիկայի հիմնական գաղափարն այն է, որ Միության շրջանակներում երկրի մասնագիտացման խորացման դեպքում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժն ապահովելու պայմանով հնարավոր է երրորդ երկրներից այլ անդամ պետություններ ներմուծումը փոխարինել այդ երկրի արտադրանքի՝ Միության ներքին շուկա մատակարարումներով:

Տնտեսության յուրաքանչյուր ոլորտի մասով՝ ներքին շուկա մատակարարման աճի ինտեգրացիոն ներուժի սահմանման համար գնահատվում է ներմուծման փոխարինումը Միության համար՝ ընդհանուր առմամբ, եւ Միության համար՝ առանց անդամ պետություններից յուրաքանչյուրի հաջորդաբար մասնակցության: Փաստացի տեղի է ունենում Միության՝ «երկրի մասնակցությամբ» եւ «առանց երկրի մասնակցության» ներմուծման փոխարինման ներուժի համեմատություն (ի տարբերություն ներմուծման փոխարինման մեթոդիկայի, որի դեպքում համեմատվում է յուրաքանչյուր անդամ պետության ներմուծման փոխարինման ներուժը՝ «առանց ինտեգրացիայի» եւ «ինտեգրացիայի» պայմաններում):

Միության ներքին շուկա մատակարարումների աճի ինտեգրացիոն ներուժը գնահատվում է *8,5 տոկոս*: Մեթոդիկայի փորձարկման արդյունքում սահմանվել են ինտեգրացիոն ներուժ ունեցող *82 ապրանքային դիրքեր* եւ *ծառայությունների 5 կատեգորիա*:

Պարզվել է, որ *Միության ներքին շուկա մատակարարումների մեծացման ամենամեծ ինտեգրացիոն ներուժը* ծառայությունների ոլորտում է, որտեղ Միության ինտեգրացիոն ներուժի 60 տոկոսը կազմում են՝

- 1) Տրանսպորտային ծառայությունները.
- 2) Այլ գործնական ծառայություններ:

Ապրանքների սեզմենտում ինտեգրացիոն ներուժ վերհանվել է հետևյալ դիրքերում (առաջնահերթության կարգով)՝ «Խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ (պրոֆիլներ)՝ սեւ մետաղներից», «Էլեկտրաէներգիա», «Անվաղողեր եւ դողածածկեր», «Բուլդոզերներ, ուղեհարթիչներ, էքսկավատորներ»: Հարկ է նշել փոխադարձ մատակարարումների հաշվին գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի ներմուծման փոխարինման առկա ներուժը՝ մասնավորապես հետևյալ ապրանքային դիրքերի համար՝ խաղող, սոյայի հատիկներ, բանջարեղեն, թռչնի միս, խաղողի գինիներ:

Մեթոդիկայի պահանջներին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից անցկացվել է երկրի մասնագիտացման հաշվին Միության ներքին շուկա մատակարարումների մեծացման ներուժ ունեցող տնտեսության ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության ստուգում:

Ըստ դրա արդյունքների՝ առաջարկվել է վերջնական ցանկը լրացնել՝

- 1) հետևյալ ապրանքային դիրքերով՝

տավարի միս, կաթ եւ կաթնամթերք, պտուղներ եւ հատապտուղներ.

270900 «Հում նավթ եւ հում նավթամթերքներ՝ ստացված բիտումային հանքանյութերից».

2710 «Նավթ եւ նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից՝ բացառությամբ հում նավթի ու նավթամթերքների. այլ տեղում չնշված կամ չներառված արտադրանք, որը պարունակում է 70 տոկոս կամ ավելի զանգվածային բաժին նավթ կամ նավթամթերքներ՝ ստացված

բիտումային ապարներից, ընդ որում՝ այդ նավթամթերքներն արտադրանքի հիմնական բաղադրիչներն են. բանեցված նավթամթերքներ».

2711 «Նավթային գազեր եւ գազանման այլ ածխաջրածիններ»:

2) ծառայությունների ոլորտներով (ենթաոլորտներով),

որոնցում Միության շրջանակներում գործում է ծառայությունների միասնական շուկա (Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 110 որոշում),

որոնցով ծառայությունների միասնական շուկայի ձևավորումը Միության շրջանակներում կիրականացվի ազատականացման ծրագրերին համապատասխան (անցումային շրջանում) (Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 30 որոշում):

#### 4. «Ապագայի ճյուղերը»

Մեթոդիկայի հիմնական գաղափարը ԵԱՏՄ անդամ պետությունների, գիտատեխնոլոգիական զարգացման առումով առաջատար երկրների, ԳՀՓԿԱ-ում ներդրումների մասով առաջատար կազմակերպությունների, խոշոր վենչուրային ֆոնդերի գիտատեխնոլոգիական զարգացման համատեղ առաջնահերթությունների ցանկի որոշումն է: Միության «ապագայի ճյուղերի» վերջնական ցանկը կազմվում է «ապագայի ճյուղերի» ռանգավորման միջոցով՝ կախված այն բանից, թե գիտատեխնոլոգիական ոլորտում ինչ թվով ռազմավարական դերակատարների համար է այս կամ այն ճյուղը համարվում առաջնահերթ:

Մեթոդիկայի փորձարկման արդյունքում սահմանվել են *նորարարական արտադրանքի եւ ծառայությունների 449 խումբ*: Ինչպես անդամ պետությունների մեծ մասի, այնպես էլ զլոբալ գիտատեխնոլոգիական զարգացման մի շարք հիմնական դերակատարների համար միաժամանակ առաջնահերթության բարձր մակարդակ ունեցող «ապագայի ճյուղերի» խմբերը հետեւյալն են՝

1) *Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները*, այդ թվում՝ ազատ տեղաշարժվող եւ մարդկանց հետ հաղորդակցվող ռոբոտ-օգնականների արտադրություն, կրթական տեխնոլոգիաների զարգացում.

2) *Կենսատեխնոլոգիաները*, այդ թվում՝ սննդային կենսամթերք, բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցներ, գյուղատնտեսության կենսատեխնոլոգիական արտադրանք, ակվաբիոկուլտուրա.

3) *Բժշկությունը եւ առողջապահությունը*, այդ թվում՝ ախտորոշման համակարգերի զարգացում, դեղամիջոցների մշակում, ռեգեներատիվ բժշկության զարգացում.

4) *Նոր նյութերի եւ նանոտեխնոլոգիաների մշակումը.*

5) *Ռացիոնալ բնօգտագործումը.*

6) *Էներգաարդյունավետությունը եւ էներգախնայողությունը*, այդ թվում՝ «խելացի» ցանցերի զարգացումը:

*5. Տնտեսության ոլորտները, որտեղ ինտեգրումը բազմապատկական էֆեկտ է ապահովում անդամ պետությունների եւ առհասարակ Միության տնտեսությունների համար*

Մեթոդիկայի հիմնական գաղափարը, այն է՝ տնտեսության այն ոլորտները սահմանելը, որոնցում ինտեգրվելը բազմապատկական էֆեկտ է ապահովում անդամ պետությունների եւ առհասարակ Միության տնտեսությունների համար, այն ոլորտները վերհանելն է, որտեղ (ներմուծման փոխարինման, արտահանման մեծացման, մասնագիտացման մասով մեթոդիկաներում վերհանված) ապրանքների եւ ծառայությունների առևտրի աճի ինտեգրացիոն ներուժը միջճյուղային կապերի համակարգի միջոցով ստեղծում է ամենամեծ ներքին պահանջարկը:

Փորձարկման արդյունքում սահմանվել են տնտեսության՝ առհասարակ Միության համար ապագայում էական բազմապատկական էֆեկտ ստեղծող հետևյալ ոլորտները՝

- 1) *Մետալուրգիա.*
- 2) *Նավթամթերքի արտադրություն եւ քիմիական համալիր.*
- 3) *Մեքենաշինություն.*
- 4) *Մեծածախ եւ մանրածախ առևտուր.*
- 5) *Էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրություն ու բաշխում.*
- 6) *Օգտակար հանածոների արդյունահանում:*

*6. Տնտեսության՝ Միության շրջանակներում արտադրական շղթաներում եւ միջազգային արտադրական շղթաներում ընդգրկվելու ներուժ ունեցող ոլորտները*

Տնտեսության՝ Միության շրջանակներում արտադրական շղթաներում եւ միջազգային արտադրական շղթաներում ընդգրկված ոլորտները սահմանելու մեթոդիկայի հիմնական գաղափարը միջանկյալ արտադրանքի՝ այլ անդամ պետություններ (այլ անդամ պետություններից) (Միության շրջանակներում շղթաներ) կամ երրորդ երկրներ (միջազգային շղթաներ) արտահանման եւ (կամ) ներմուծման աճի բարձր ներուժ ունեցող ոլորտները վերհանելն է:

Յուրաքանչյուր անդամ պետության համար արտադրական շղթաներում ընդգրկվելու ընթացիկ վիճակը եւ ներուժը հաշվարկվում են միջանկյալ արտադրանքի նկատմամբ պահանջարկի եւ դրա արտադրության կառուցվածքի հիման վրա՝ հաշվի առնելով անդամ պետության տնտեսությունում ինտեգրացիայի եւ միջճյուղային կապերի արդյունքում առևտրի աճի ներուժը:

Ապրոբացիայի արդյունքում սահմանվել են տնտեսության՝ (առհասարակ Միության շրջանակներում) արտադրական շղթաներում ընդգրկված հետևյալ ոլորտները՝

- 1) *Միության շրջանակներում արտադրական շղթաներ*
  - նավթամթերքի արտադրություն եւ քիմիական համալիր,
  - մետալուրգիա,

- մեքենաշինություն,
- էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի արտադրություն եւ բաշխում,
- օգտակար հանածոների արդյունահանում:

2) *Միջազգային արտադրական շղթաներ*

- մեքենաշինություն,
- մետալուրգիա,
- նավթամթերքի արտադրություն եւ քիմիական համալիր,
- էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի արտադրություն եւ բաշխում,
- օգտակար հանածոների արդյունահանում:

7. *Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտներն ու պետական մասնակցությամբ ընկերությունների բարձր մասնաբաժին ունեցող ոլորտները*

Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտներն ու պետական մասնակցությամբ ընկերությունների բարձր մասնաբաժին ունեցող ոլորտները սահմանելու համար կիրառված մեթոդիկայի հիմնական գաղափարը այն ոլորտները վերհանելն է, որտեղ տնտեսական գործունեությունն անմիջականորեն կառավարվում է պետության կողմից: Տնտեսության այդպիսի ոլորտներում ինտեգրացիոն միջոցները կարող են իրագործվել ժամանակին, ավելի օպերատիվ եւ արդյունավոր կերպով:

Ազգային դասակարգիչներին համապատասխան՝ պետական մասնակցությամբ ընկերությունների մասնաբաժինները հաշվարկվել են ըստ սեփականության ձևերի եւ գործունեության տեսակների՝ ակտիվների մասնաբաժնի հիման վրա:

Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտների մասով իրականացվել է անդամ պետությունների նորմատիվ իրավական բազայի վերլուծություն, եւ դրա հիման վրա ձևավորվել է տնտեսության այն ոլորտների ցանկը, որտեղ պետական կարգավորումն իրականացվում է երկու ուղղություններով՝

- անմիջական ազդեցությունը գնագոյացման վրա (մասնավորապես, սակագների, սահմանային գների, գնի հավելումների սահմանում).

- ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների ֆինանսական եւ վարչական ծախքերի մակարդակի վրա (մասնավորապես, լիցենզավորման, գրանցման, հավաստագրման, թույլտվությունների տրամադրման եւ այլն):

Ըստ մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքների՝ սահմանվել են առհասարակ Միության համար *տնտեսության՝ տնտեսական գործունեության վրա պետության առավելագույն ազդեցությամբ 156 ոլորտ*, որտեղ «առաջատարները» հետեւյալն են՝

- 1) *Մենդամթերքի, այդ թվում՝ ըմպելիքների եւ ծխախոտի արտադրություն,*
- 2) *Օգտակար հանածոների արդյունահանում,*
- 3) *Էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրություն ու բաշխում,*
- 4) *Գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն.*

*ձկնորսություն, ձկնարուծություն:*

*Տնտեսության՝ Եվրասիական տնտեսական միությունում ամենամեծ ինտեգրացիոն ներուժն ունեցող ոլորտների համահավաք ցանկը*

ԵՍՏՄ-ի շրջանակներում ինտեգրացիայի արդյունքում ամենամեծ համընդհանուր էֆեկտը (համընդհանուր էֆեկտի ավելի, քան 60 տոկոսը) ձեւավորող տնտեսության հիմնական ոլորտները հետեւյալն են՝

- 1) *Մեքենաշինություն.*
- 2) *Նավթամթերքի արտադրություն.*
- 3) *Քիմիական արտադրանքի, ռետինի ու պլաստմասսայի եւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրություն.*

- 4) *Մետալուրգիա:*

Միեւնույն ժամանակ ինտեգրացիոն ներուժի տարբեր տեսակներ տնտեսության տարբեր ոլորտներում (համընդհանուր էֆեկտ ստանալու գործում ունեցած ներդրման իմաստով) ունեն առավել մեծ նշանակություն՝

*ներմուծման փոխարինում՝* մանածագործական արտադրության, կաշվե արտադրատեսակների եւ կոշկեղենի արտադրության, մեքենաշինության ոլորտներում,

*երրորդ երկրներ արտահանման մեծացում՝* նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի, ինչպես նաեւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրության ոլորտներում եւ այլ արտադրություններում.

*Միության ներքին շուկա մատակարարումների աճ՝ տրանսպորտի եւ կապի ոլորտում,*

*բազմապատկական էֆեկտ՝* տնտեսության շատ ոլորտներում (առավել լայն ոլորտների շարքում՝ մետալուրգիայի, էլեկտրաէներգիայի գազի եւ ջրի արտադրության ու բաշխման, առեւտրի, օգտակար հանածոների արդյունահանման ոլորտներում),

*արտադրական շղթաներում ունեցած մասնակցությունից էֆեկտ՝* գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության, էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրության ու բաշխման ոլորտներում:

Ելնելով հինգ մեթոդիկաների արդյունքներից՝ Միության շրջանակներում *մեքենաշինությունը* համարվում է ամենամեծ համընդհանուր ինտեգրացիոն էֆեկտն ապահովող տնտեսության ոլորտը, ինչը վկայում է տվյալ ճյուղի զարգացմանն ուղղված համատեղ միջոցների մշակման նպատակահարմարության մասին:

Առանձին անդամ պետությունների համար տնտեսության՝ առավելագույն ինտեգրացիոն էֆեկտ ստանալու տեսանկյունից առավել կարելոր ոլորտները հետեւյալն են (ավելի մանրամասն տե՛ս 18-րդ աղյուսակում)՝



*Հայաստանի Հանրապետության համար*՝ տրանսպորտը եւ կապը (ներմուծման փոխարինման հաշվին), գյուղատնտեսությունը, մեքենաշինությունը, էլեկտրաէներգիայի եւ ջրի արտադրությունն ու բաշխումը, բնական գազի բաշխումը (տարանցումը):

*Քելառուսի Հանրապետության համար*՝ նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի եւ այլ, ոչ մետաղական արտադրանքի արտադրությունը (երրորդ երկրներ արտահանման աճի արդյունքում), մեքենաշինությունը, մետալուրգիան, էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրությունն ու բաշխումը:

*Ղազախստանի Հանրապետության համար*՝ մետալուրգիան, մեքենաշինությունը (երրորդ երկրներ արտահանման աճի արդյունքում), ինչպես նաեւ նավթամթերքի, քիմիական արտադրանքի արտադրությունը, ռետինե եւ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը, այլ, ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրությունը, տրանսպորտը եւ կապը:

*Ղրղզստանի Հանրապետության համար*՝ մեքենաշինությունը, տրանսպորտը եւ կապը (ներմուծման փոխարինման հաշվին), նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի ու պլաստմասսայի եւ այլ, ոչ մետաղական արտադրանքի արտադրությունը, մետալուրգիան (բազմապատկական էֆեկտի ազդեցություն):

*Ռուսաստանի Ղաշնության համար*՝ մեքենաշինությունը, մետալուրգիան, նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի ու պլաստմասսայի եւ այլ, ոչ մետաղական արտադրանքի արտադրությունը:

Ձեկույցում ներկայացված՝ կատարված աշխատանքների արդյունքները թույլ են տվել տնտեսապես հիմնավորված կերպով սահմանել տնտեսության այն ոլորտները, որտեղ ինտեգրացիոն գործողությունները Միության բոլոր անդամ պետությունների համար կապահովեն առավելագույն տնտեսական էֆեկտ:

Տնտեսության՝ Եվրասիական տնտեսական միությունում ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների ցանկերը, որոնք մանրամասնեցված են Եվրասիական

տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) 4 նիշերի / վճարային հաշվեկշռով՝ արտահայտված՝ Ծառայությունների ընդլայնված դասակարգման մեջ ներառված ծառայությունների կատեգորիաների (այսուհետ՝ ԾԸԴՎՀ) / ըստ տնտեսական գործունեության դասակարգչի (այսուհետ՝ ՏԳԴ) գործունեության տեսակների մակարդակով, ինչպես նաև «ապագայի ճյուղերի» ցանկը ներկայացված են սույն Ձեկույցին կից 3-րդ հավելվածում:

Տնտեսության՝ ԵԱՏՄ-ում ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները սահմանելու մեթոդիկաների օգտագործմամբ *չի չեղարկվում եւ չի փոխվում* համագործակցության ոլորտներ ընտրելու հիմնական սկզբունքը՝ պայմանավորվածությունների ձեռքբերումը բոլոր անդամ պետությունների միջև: Ստացված արդյունքները կարող են ծառայել որպես տեղեկատվության աղբյուր՝ տնտեսության իրական հատվածում, ծառայությունների եւ տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հարցերով անդամ պետությունների միջև խորհրդակցություններ անցկացնելու համար: Բացի դրանից, դրանք պետք է կազմեն ինտեգրացիայի ճյուղային առաջնահերթություններ ձեւավորելու համակարգային աշխատանքի, ԵԱՏՄ-ի շրջանակներում ինտեգրացիոն միջոցների համալիր մշակելու եւ նախագծերի կառավարման սկզբունքներն իրագործելու մի մաս:

Մեթոդիկաների եւ անդամ պետությունների միջև պայմանավորվածությունների արդյունքները հաշվի առնող համալիր հիմքով ընդհանուր ճյուղային առաջնահերթություններ սահմանելը թույլ կտա բարձրացնել տնտեսության առանձին ոլորտների զարգացման համատեղ ծրագրերի նախապատրաստման որակն ու արագությունը եւ կանոնավոր կերպով իրականացնել ինտեգրացիոն միջոցների արդյունավետության դիտանցում:

---

<sup>1</sup> ՄԱԿ-ի՝ «Extended Balance of Payments Services Classification» (EBOICS) դասակարգիչ

## Ներածություն

Եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացների ակտիվ զարգացումը հետեւանք էր երկրների միջեւ տնտեսական ինտեգրացիայի եւ տարածաշրջանային միավորումների ձեւավորման գործընթացների, ինչպես նաեւ արձագանք գլոբալ մարտահրավերներին, ռիսկերին եւ սպառնալիքներին: Տարածաշրջանային միավորումների շրջանակներում անդամ պետությունների փոխկախվածությունն ու փոխադարձ լրացվելիությունն աճում է, ինչն էլ պայմանավորված է ընդհանուր շուկայի ձեւավորմամբ, միասնական, համաձայնեցված եւ համակարգված քաղաքականության իրականացմամբ: Այդպիսի համագործակցության արդյունքում յուրաքանչյուր երկիր մեկ ամբողջության մեջ միավորվելու ինտեգրացիոն ներուժի իրագործման եւ մրցակցային ազգային առավելությունների հաշվին ստանում է լրացուցիչ տնտեսական շահույթ:

Ինտեգրացիոն հնարավորությունների իրականացումը, ի տարբերություն երկրի՝ ազգային մակարդակում տնտեսական զարգացման, պահանջում է կարգավորման միջոցների մշակման այլ մոտեցում: Այդ մոտեցումը պետք է հիմնվի բոլոր անդամ պետությունների համար ընդհանուր տնտեսական նպատակների վրա, հաշվի առնի ազգային տնտեսական ներուժը եւ դրանց սիներգիկ հնարավորությունները:

Միությունում սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային ուղղությունները սահմանելու համար, որոնց իրականացմանն են ձգտում անդամ պետությունները միավորման ինտեգրացիոն ներուժի օգտագործման եւ անդամ պետությունների մրցակցային առավելությունների հաշվին, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 28 որոշմամբ մշակվել եւ հաստատվել են Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները: Փաստաթուղթը հիմք է հանդիսանում Միության պայմաններում անդամ պետությունների համատեղ տնտեսական զարգացման, դիրքերի փոխազդեցության եւ համաձայնեցման

հնարավորությունների, ազգային տնտեսությունների առավել մեծ կանխատեսելիություն եւ հաստատունություն ապահովելու եւ, վերջին հաշվով, յուրաքանչյուր անդամ պետության կողմից լրացուցիչ տնտեսական էֆեկտ ստանալու համար:

Հիմնական ուղղությունների մշակման եւ հետագա իրագործման հիմքում դրվել են միմյանց փոխլրացնող երկու սկզբունք՝

1) Տնտեսական զարգացման՝ անդամ պետությունների համար ընդհանուր երկարաժամկետ ուղղությունների ընտրություն, որտեղ ինտեգրացիոն միջոցների ու գործողությունների իրագործումը կազդի անդամ պետությունների տնտեսությունների մրցունակության վրա: Տվյալ մոտեցումը ենթադրում էր Հիմնական ուղղությունների մշակում ոչ թե ըստ տնտեսության յուրաքանչյուր ոլորտում (հատվածում, ճյուղում) երկարաժամկետ ինտեգրացիոն միջոցների նկարագրությամբ ճյուղային սկզբունքի, այլ ըստ պայմանների սահմանման սկզբունքի, որոնք «համընդհանուր» են Միության անդամ պետությունների տնտեսության ցանկացած ոլորտի ինտեգրացիոն զարգացման նպատակների համար:

2) Տնտեսության այն ոլորտներում (ճյուղերում, հատվածներում) ինտեգրացիոն համագործակցության չափորոշիչների սահմանում, որտեղ լրացուցիչ ինտեգրացիոն էֆեկտ ստանալու հավանականությունն ամենամեծն է, իսկ էֆեկտի չափը կարելու է բոլոր անդամ պետությունների (անդամ պետությունների մեծ մասի) տնտեսությունների համար: Տվյալ խնդրի լուծման համար փաստաթղթում սահմանվել են տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների ընտրության չափորոշիչներ, որոնք, անդամ պետությունների տնտեսական զարգացման խնդիրների հետ կապված, համապատասխանում են ինտեգրացիոն ներուժի տարբեր տեսակներին՝

բազմապատկական էֆեկտի առկայություն եւ (կամ) այն ձեւավորելու ներուժ (այսուհետ՝ բազմապատկական էֆեկտներ),

անդամ պետությունների կոռպորացիայի հաշվին ներմուծման փոխարինման բարձր արդիականություն եւ (կամ) ներուժ (այսուհետ՝ ներմուծման փոխարինում),

երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ բազմազանեցման բարձր ներուժ (այսուհետ՝ արտահանման մեծացում),

անդամ պետությունների տնտեսությունների մասնագիտացման եւ դրանց մրցակցային առավելությունների օգտագործման հաշվին ներքին շուկա ապրանքների եւ ծառայությունների մատակարարումների մեծացման հեռանկարներ (այսուհետ՝ մասնագիտացում),

ավելացված արժեքի ստեղծման միջազգային արտադրական շղթաներում եւ Միության շրջանակներում արտադրական շղթաներում անդամ պետությունների մասնակցության եւ ներկայության ընդլայնման հեռանկարներ (այսուհետ՝ արտադրական շղթաներ),

«հետ ընկած» զարգացման հայեցակարգից հրաժարվելու հնարավորությունը եւ ինտեգրացիոն ջանքերի կենտրոնացումը համաշխարհային ցուցանիշները գերազանցող տեմպերով նոր տեխնոլոգիաների ստեղծման եւ ներգրավման հաշվին անդամ պետությունների տնտեսությունների ոլորտների զարգացման վրա («ապագայի ճյուղերի» ձեւավորում) (այսուհետ՝ «ապագայի ճյուղերի»),

պետական կարգավորման եւ (կամ) պետական մասնակցության բարձր մակարդակ (այսուհետ՝ պետական կարգավորում),

Ինտեգրացիոն միջոցների իրագործման համար տնտեսության ոլորտների ռացիոնալ ընտրության կարեւորությունը պայմանավորված է անդամ պետությունների տնտեսությունների կառուցվածքի եւ չափերի տարբերություններով, առանձին ճյուղերի եւ հատվածների պետական կարգավորման առանձնահատկություններով, ինչպես նաեւ համաշխարհային ավելացված արժեքի ձեւավորման մեխանիզմում ընդգրկված լինելու (մասնակցության) մակարդակով: Այդ գործոնները Միության հնարավորությունների հետ միասին վերջին հաշվով ազդում են իրագործվող ինտեգրացիոն միջոցների արդյունավետության եւ լրացուցիչ տնտեսական էֆեկտի մասշտաբի վրա: «Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մասին» Եվրասիական տնտեսական

բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 28 որոշմամբ Հանձնաժողովին՝ անդամ պետությունների հետ համատեղ, հանձնարարվել է վերոնշյալ չափորոշիչների հիման վրա նախապատրաստել առաջարկություններ տնտեսության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով նախատեսված, ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները եւ ինտեգրացիոն ներուժի օգտագործմանն ուղղված միջոցներ սահմանելու մասին:

Չափորոշիչներին համապատասխան՝ մշակվել են տնտեսության՝ Միությունում ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները սահմանելու յոթ մեթոդիկա, որոնց փորձարկման բովանդակությունը եւ արդյունքները ներկայացված են սույն Զեկույցում:

Տնտեսության ոլորտներում ինտեգրացիոն ներուժի գնահատման արդյունքների օգտագործումն ուղղված է *համագործակցության ինտեգրացիոն առաջնահերթությունների ընտրության առկա մեխանիզմի կատարելագործմանը*: Մի կողմից, դա ենթադրում է տնտեսության առանձին ոլորտներում Հանձնաժողովի եւ անդամ պետությունների կողմից զարգացման համատեղ միջոցների մշակման ժամանակ ինտեգրացիոն էֆեկտների քանակական գնահատականների հաշվառման հնարավորություն: Մյուս կողմից, ԵԱՏՄ-ում զարգացման ուղղությունների (արտահանման մեծացում, ներմուծման փոխարինում, նորարարությունների զարգացում եւ այլն) վերաբերյալ համակարգված, համաձայնեցված, միասնական քաղաքականություն ձեւավորելիս եւ իրականացնելիս հնարավոր է դառնում ավելի ճշգրիտ նույնականացնել տնտեսության այն ոլորտները (ճյուղերը, հատվածները, ապրանքները (ծառայությունները)), որոնցում ինտեգրացիոն էֆեկտներն առավել նշանակալից կլինեն անդամ պետությունների համար:

**1. Համագործակցության ինտեգրացիոն առաջնահերթություններ  
սահմանելու եւ տնտեսության ոլորտներում ինտեգրացիոն ներուժը  
գնահատելու միջազգային փորձը**

Տարածաշրջանային միավորումների գործունեության կարելու կողմ է դրանց տնտեսական զարգացման ռազմավարություններում այն մրցակցային առավելությունների մաքսիմալացման ծրագրերի առկայությունը, որն այդ միավորման կազմում ընդգրկված երկրներից յուրաքանչյուրն ունի: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ավելի, քան 30 ինտեգրացիոն միավորումների գործունեության ստացված արդյունքները, եւ մանրամասն վերլուծության են ենթարկվել դրանց համագործակցության ճյուղային մոդելները:<sup>2</sup>

Ըստ վերլուծության արդյունքների՝ առանձնացվել են երկրների խմբերի համար ինտեգրացիայի մոդելներ (սխեմաներ), որոնց հիմքում ընկած է համագործակցության ճյուղային սկզբունքը՝

տնտեսության՝ միավորման բոլոր երկրների համար համակարգաստեղծ ճյուղերի համատեղ զարգացում,

ինտեգրացիոն միավորման բոլոր երկրների համար հետաքրքրություն ներկայացնող ճյուղերի զարգացում,

ազգային տնտեսությունների փոխլրացնող ճյուղերի համատեղ զարգացում,

ճյուղերի համատեղ զարգացում՝ ինտեգրացիոն միավորման երկրների մրցակցային առավելությունների օգտագործմամբ,

մասնագիտացման ճյուղերի զարգացում՝ ինտեգրացիոն միավորման երկրների մրցակցային առավելությունների հիմքով,

ներմուծման փոխարինման ճյուղերի համատեղ զարգացում,

---

<sup>2</sup> «Աշխարհի առավել հայտնի ինտեգրացիոն միավորումների ինտեգրացիոն համագործակցության ռազմավարությունների (ինտեգրացիոն ներուժի իրագործման մոդելների) վերլուծությունը» զեկույցը տեղադրված է Եվրասիական տնտեսական հանձնաժողով/Գործունեություն/Ինտեգրացիա եւ մակրոտնտեսության/Մակրոտնտեսական քաղաքականության դեպարտամենտ/Հետազոտություններ բաժնում՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում [http://www.eurasiancommission.org/ru/aci\\_integr\\_i\\_makroec/dep\\_makroec\\_pol\\_investigations/Pages/default.aspx](http://www.eurasiancommission.org/ru/aci_integr_i_makroec/dep_makroec_pol_investigations/Pages/default.aspx)

ենթակառուցվածքի համատեղ զարգացում՝ փոխադարձ եւ արտաքին առեւտրի ընդլայնման համար:

### *Ծանոթագրություն՝*

Օրինակ՝ ազգային տնտեսությունների փոխլրացնող ճյուղերի համատեղ զարգացման համար Բրազիլիան եւ Արգենտինան ՄԵՐԿՈՍՈՒԲ-ի<sup>3</sup> շրջանակներում արտադրում են տրանսպորտային միջոցներ: Ղեկավարվելով ստորագրված համաձայնագրով՝ այս երկրները համատեղ արտադրում են բեռնատար եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլներ, ընդ որում՝ հավաքումն իրականացվում է Արգենտինայում՝ Բրազիլիայից լրամասերի օգտագործմամբ (Բրազիլիան մատակարարում է ավտոմոբիլային մասերի, դետալների եւ մեխանիզմների 46 տոկոսը): Պատրաստի արտադրանքն իրացվում է հիմնականում համայնքի ներքին շուկայում:

Թվարկված մոդելները (սխեմաներն) իրարամերժ չեն, այլ արտացոլում են ինտեգրացիոն ներուժի իրագործման համար առկա նախադրյալների իրականացման եւ անդամ պետությունների մրցակցային առավելությունների օգտագործման տրամաբանությունը: Միեւնույն ժամանակ, խոշորագույն ինտեգրացիոն միավորումների (այդ թվում՝ Եվրոպական միության, ՆԱՖՏԱ-ի<sup>4</sup> եւ ՀԱԱՊԱ-ի<sup>5</sup>) պաշտոնական փաստաթղթերը չեն պարունակում մեթոդաբանական մոտեցումներ, որոնց հիման վրա առանձնանում են տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտները, ինչպես նաեւ չեն պարունակում ինտեգրացիոն էֆեկտների գնահատման պաշտոնական մոտեցումներ: Վերազգային մարմինների կողմից հրապարակվող գնահատականները չունեն պաշտոնական կարգավիճակ եւ, հետեւաբար, մեծամասամբ գիտական հետաքրքրություն են ներկայացնում:

Այս առումով առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում հետեւյալ աշխատությունները՝ Եվրոպական հանձնաժողովի պատվերով CEPR<sup>6</sup> հետազոտությունները («Transatlantic Trade and Investment Partnership» (CEPR, 2013a) եւ «Reducing Transatlantic Barriers to Trade and Investment»

<sup>3</sup> Հարավային Ամերիկայի երկրների ընդհանուր շուկա

<sup>4</sup> Ազատ առեւտրի մասին հյուսիսամերիկյան համաձայնագիր

<sup>5</sup> Հարավ-արեւելյան Ասիայի պետությունների ասոցիացիա

<sup>6</sup> The Center for Economic and Policy Research



(CEPR, 2013b)), ինչպես նաև ՆԱՖՏԱ-ի համար «NAFTA at 20: North America's Free-Trade Area and Its Impact on Agriculture» ճյուղային զեկույցը գյուղատնտեսության մասին (Zahniser et. al., 2015):

CEPR զեկույցները Տրանսատլանտյան առևտրային և ներդրումային գործընկերության (TTIP)՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի ձեռավորվող տնտեսական տարածքի վերաբերյալ են՝ առաջին զեկույցում ներկայացված են համաձայնագրի մասնակից պետությունների բարեկեցության փոփոխության ինտեգրալ գնահատականները, երկրորդ զեկույցում մանրամասնորեն գնահատվում են ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև ոչ սակագնային խոչընդոտները վերացնելու հետևանքները: Երկու զեկույցների համար քանակական գնահատականները ստացվել են CEPR-ի կողմից՝ ընդհանուր հավասարակշռության հաշվելի մոդելի հիման վրա: Հեղինակներն օգտագործել են GTAP8 նախագծի տվյալների բազան, իսկ ոչ սակագնային խոչընդոտների համարժեքների գնահատականները վերցվել են Ecorys աշխատությունից (2009): Մոդելը բազային «պարզ» տարբերակների համեմատ էականորեն մոդիֆիկացվել է, մասնավորապես՝ ապահովվում է ոչ կատարյալ մրցակցություն, տնտեսական էֆեկտ՝ կախված մասշտաբից, աշխատողների (հմտությունների) որակավորման տարբեր մակարդակ:

Երկու զեկույցներում էլ ինտեգրացիայի սցենարները քննարկվում են երկու տարբերակով: «Հավակնոտ տարբերակը» ենթադրում է սակագնային խոչընդոտների լիարժեք վերացում, ապրանքների և ծառայությունների առևտրում ոչ սակագնային խոչընդոտների 25 տոկոսով իջեցում, պետական գնումներում մասնակցության խոչընդոտների իջեցում՝ 50 տոկոսով: «Ռեալիստական» տարբերակով նախատեսվում է ոչ սակագնային խոչընդոտների իջեցում 10 տոկոսով, ապրանքների 98 տոկոսի սակագների վերացում և երկրների միջև առևտրի ազատականացման ուղղությամբ քանակությունների շարունակում: Բացի դրանից, մոդելի նախապայմաններում զետեղվում է նաև երկրների միջև համաձայնության կանոնների և ստանդարտների մասնակի ներդաշնակեցումը:

CEPR-ի գնահատմամբ՝ «ամբիցիոզ» սցենարի իրականացման դեպքում ԵՄ-ում ՀՆԱ-ի աճը կազմում է մոտ 0,5 տոկոս, իսկ ԱՄՆ-ում՝ 0,4 տոկոս: Առավելապես կշահեն հետեւյալ ճյուղերը՝ մետաղից արտադրատեսակներ (արտահանման աճ՝ 12 տոկոսով), սննդամթերք (9 տոկոս), քիմիական արդյունաբերություն (9 տոկոս), այլ արդյունաբերական ապրանքներ (6 տոկոս), այլ տրանսպորտային սարքավորումներ (6 տոկոս), ավտոմոբիլներ (40 տոկոս): Գյուղատնտեսության, անտառային արդյունաբերության եւ ձկնարդյունաբերության բացթողման ընդհանուր ծավալը կավելանա 0,06 տոկոսով, թեւ առանձին հատվածներում կարող է դիտվել նաեւ անկում: Սցենարների իրականացումից ստացվող ընդհանուր էֆեկտները ներկայացված են 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1. Ընդհանուր մակրոտնտեսական էֆեկտ՝ ստացված TTIP համաձայնագրի իրականացումից

	Մասնակի համաձայնագիր՝ միայն սակագների ապրանքների համար	Մասնակի համաձայնագիր՝ միայն սակագների ծառայությունների համար	Մասնակի համաձայնագիր՝ միայն սակագների պետական գնումների համար	Լիարժեք համաձայնագիր՝ պակաս հավակնոտ սցենար	Ամբողջ համաձայնագիր՝ հավակնոտ սցենար
<i>ՀՆԱ-ի աճ</i>					
ԵՄ, մլն. եվրո	23.8	5.3	6.4	68.3	119.2
ԱՄՆ, մլն. եվրո	9.4	7.4	1.9	49.5	94.9
<i>Երկկողմ արտահանում</i>					
ԵՄ, մլն. եվրո	43.8	4.6	7.0	107.8	187.0
ԱՄՆ, մլն. եվրո	53.8	2.9	3.4	100.9	159.1
<i>Ընդհանուր արտահանում</i>					
ԵՄ, մլն. եվրո	43.7	5.8	7.1	125.2	220.0
ԱՄՆ, մլն. եվրո	57.3	5.5	5.9	142.1	239.5

Աղբյուրը՝ CEPR (2013b)

Ենթադրվում են ճյուղային էական էֆեկտներ: Հեղինակների գնահատմամբ՝ արտահանման աճ կնկատվի գործնականորեն բոլոր ճյուղերում՝ մասնավորապես, ավտոմոբիլաշինության, մետաղների եւ մետաղից արտադրատեսակների արտադրության, սննդի արդյունաբերության ճյուղերում: Նվազագույն էֆեկտ բնորոշ կլինի այնպիսի ճյուղերին, ինչպիսիք են կապը, ավիացիոն արդյունաբերությունը, այլ արդյունահանող ճյուղեր, այլ ծառայություններ (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. TTIP համաձայնագրի իրականացումից բխող՝ առավելագույն եւ նվազագույն աճ ունեցած ճյուղերը (հորիզոն՝ 2027 թվական)

Ճյուղերը	ԵՄ-ից ԱՄՆ		ԱՄՆ-ից ԵՄ	
	Ամբողջ համաձայնագիրը. առավել պակաս հավակնոտ սցենար	Ամբողջ համաձայնագիրը. հավակնոտ սցենար	Ամբողջ համաձայնագիրը. Առավել պակաս հավակնոտ սցենար	Ամբողջ համաձայնագիրը. հավակնոտ սցենար
Ավտոմոբիլաշինություն	71.0	148.7	207.4	346.8
Մետալուրգիա եւ մետաղական արտադրատեսակների արտադրություն	42.4	68.2	52.7	88.1
Սննդային արդյունաբերություն	26.1	45.5	56.5	74.8
Արդյունաբերության այլ ճյուղեր	23.0	22.8	16.3	16.7
Էլեկտրասարքավորումների արտադրություն	18.3	35.0	21.9	44.1
Փայտանյութի մշակում, փայտե արտադրատեսակների արտադրություն եւ ցելյուլոզաթղթային արդյունաբերություն	10.8	19.9	21.7	42.5
Քիմիական արդյունաբերություն	20.0	36.2	23.0	34.2
Այլ արդյունահանող ճյուղեր	0.5	0.6	0.5	0.4
Ավիացիոն արդյունաբերություն	0.9	1.6	1.0	2.2
Կապ	0.6	0.9	5.0	10.5
Այլ ծառայություններ	-0.4	-1	0.6	1.5

Աղբյուրը՝ CEPR (2013b)

Բացի այն աշխատանքներից, որոնցում ինտեգրացիոն էֆեկտների գնահատման համար օգտագործվում են ընդհանուր հավասարակշռության հաշվարկվող մոդելները, գոյություն ունեն մի շարք հետազոտություններ, որոնցում ինտեգրացիոն էֆեկտների գնահատականները ստացվել են պարզ ցուցանիշների հիման վրա: Հատուկ օրինակ կարելի է համարել «NAFTA at 20: North America's Free-Trade Area and Its Impact on Agriculture» զեկույցը, որում առանձին գյուղատնտեսական եւ պարենային խմբերի ինտեգրացիայի մակարդակի գնահատման համար կիրառվում է հեղինակային մեթոդիկա, որը հիմնված է պարզ ցուցանիշների (Zahniser et. ah, 2015) վերլուծության վրա, եւ Եվրասիական ինտեգրացիայի ինդիկատորների համակարգը (ԻՀԿ ՁԵԱԲ, 2014), որը հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն գործընթացների մշտադիտարկման եւ գնահատման գործիք է:

Ժամանակակից գրականությունում ինտեգրացիոն էֆեկտների քանակական գնահատական ստանալու համար կիրառվում են տարբեր մոտեցումներ: Ամենից մեծ տարածումն են գտել ընդհանուր հավասարակշռության հաշվարկվող մոդելները եւ Էկոնոմետրիկ մոդելները:

### **Ընդհանուր հավասարակշռության հաշվարկվող մոդելները**

Ընդհանուր հավասարակշռության հաշվարկվող մոդելները (CGE-մոդելները, Computable General Equilibrium models)<sup>7</sup> գործընկեր երկրների համար ինտեգրացիայի էֆեկտների քանակական գնահատման՝ ամենից հաճախ կիրառվող գործիքներից մեկն են: Այդ տիպի մոդելների տեղեկատվական ապահովման հարցում կարելու դեր են խաղում սոցիալական հաշիվների այն մատրիցաները, որոնք պարունակում են ֆիրմաների, տնային տնտեսությունների եւ պետությունների միջեւ միջճյուղային փոխադարձ կապերի ու դրամական

---

<sup>7</sup> CGE մոդելներին հատուկ են երեք հիմնական բնութագրեր (Dixon, Paramentr, 1996): Առաջին հերթին, նկարագրվում է տնտեսական սուբյեկտների վարքը՝ տնային տնտեսությունների, ֆիրմաների, պետությունների: Երկրորդ հերթին, առնվազն մի շարք ապրանքների եւ արտադրության գործոնների մատով՝ սահմանվում է գների ձևավորման մեխանիզմ (շուկայական հավասարակշռության հասնելու հաշվին): Երրորդ հերթին, մոդելի որոշման արդյունք են հանդիսանում քանակական գնահատականները:

հոսքերի մասին տվյալներ:<sup>8</sup> Տեսականորեն, դա թույլ է տալիս արդյունքներ ստանալ տնտեսության ճյուղերի մակարդակով, սակայն գործնականում հիմնական աշխատանքներում գնահատականները տարանջատվում են մասամբ (սովորաբար շեշտը դնելով այն ճյուղերի վրա, որոնցով հետազոտողը հետաքրքրված է) կամ, ընդհանուր առմամբ, ուսումնասիրվում են տնտեսության մակարդակով:<sup>9</sup>

Աշխատանքների բացարձակ մեծամասնությունում, որոնցում ընդհանուր հավասարակշռության առանձնացված մոդելներն օգտագործվում են ինտեգրացիոն էֆեկտների գնահատման համար, լուծվում է մակրոտնտեսական (եւ ոչ ճյուղային) էֆեկտների գնահատման խնդիրը:<sup>10</sup>

CGE-մոդելների հիմնական առավելությունների թվին են դասվում՝

լավ մշակված տեսական բազայի առկայությունը.

տնտեսական սուբյեկտների (այդ թվում՝ սպառողների) մակարդակով միավորումների մասնակիցների համար շահույթի եւ ծախսերի որոշումը.

ստեղծվող ինտեգրացիոն միավորման (ազատ առևտրի գոտու) ձեւաչափի մասին տարբեր սցենարային նախապայմանների ստուգման հնարավորությունը.

մեթոդի՝ հարմար ձեւով իրագործման համար տվյալների բազայի եւ ծրագրերի առկայությունը:

Մեթոդի հիմնական թերությունները՝<sup>11</sup>

ճյուղային էֆեկտները կարող են ստացվել միայն բավականաչափ ագրեգացված մակարդակում.

<sup>8</sup> Առանձին հետազոտություններում (օրինակ՝ EDB, 2012) միջճյուղային հաշվեկշիռը՝ որպես ինքնուրույն մեթոդ, կիրառվում է ինտեգրացիայի էֆեկտի գնահատման համար: Սակայն, որպես կանոն, այն օգտագործվում է այլ մեթոդների հետ միասին:

<sup>9</sup> Ամենից մեծ տարածումը գտած ընդհանուր հավասարակշռության հաշվարկվող մոդելներից մեկը, որն օգտագործվում է առևտրային քաղաքականության մեջ, մոդել GTAP-ն է (Hertel et al. 1997): Դրա կառուցման համար օգտագործվում է տվյալների համապատասխան բազան, որի վերջին տարբերակը (GTAP9) ներառում է 2004, 2007 եւ 2011 թթ.-ի դրությամբ 140 երկրի եւ շրջանի ու 57 ճյուղերի վերաբերյալ տվյալներ:

<sup>10</sup> Այդպիսի մոդելներ կառուցվել են, օրինակ, ԵՄ երկրների (Haaland, Norman, 1993, Harrison et al, 1994, Baldwin et al, 1997) եւ Հյուսիսային Ամերիկայի (Cox, Harris, 1985, Brown et al 1992) համար: Ինտեգրացիայի ճյուղային ասպեկտների վերլուծության աշխատանքները փոքրամասնություն են կազմում: Ընդ որում, անգամ այդպիսի աշխատանքներում ճյուղային էֆեկտները հիմնական կիզակենտրոնում չեն, իսկ ագրեգացիայի մակարդակը բարձր է: Տարբեր երկրների եւ միավորումների վերաբերյալ հետազոտությունների օրինակներն են (APEC, 2002, Hertel et al, 2001, Ando, 2009, tang et al, 2015), մի քանի հետազոտություններ կատարվել են Ռուսաստանի համար (Կնոբել, Չոկաե 2014, Tochitskaya, de Souza, 2008, ՋեԱԲ, 2015):

<sup>11</sup> Քննադատությունն առավել մանրամասն ներկայացված է McKittrick-ի (1998) աշխատանքներում: Grassini (2009):

մեթոդը շատ զգայուն է տրամաչափարկման եղանակի եւ պարամետրերի արժեքների ընտրության հարցում (հաճախ օգտագործվում են էկզոգեն պարամետրեր, որոնք ընդհանուր առմամբ, գնահատվում են տարբեր մեթոդաբանություններով իրականացվող այլ աշխատանքներով)։

մեթոդը տվյալների նկատմամբ բարձր պահանջներ է ներկայացնում (GTAP բազայում տվյալների բացակայության դեպքում պահանջվում է ինքնուրույն հաշվել սոցիալական հաշիվների մատրիցաները, ինչը համարվում է չափազանց բարդ խնդիր)։

արդյունքները լրջորեն պայմանավորված են ընդունված նախապայմաններով, որոնք հիմնականում լինում են շատ խիստ.

մոդելը թույլ չի տալիս որոշել էֆեկտների իրագործման ժամկետը<sup>12</sup>։

մոդելի ստանդարտ դիրքը թույլ չի տալիս հաշվել առավել բարդ էֆեկտները (այնպիսիք, ինչպես օրինակ՝ ընդհանուր գործունային արտադրողականության աճը)։

մոդելի որակի ստուգման ֆորմալացված չափանիշները բացակայում են։

### **Էկոնոմետրիկ մոդելները**

Ինտեգրացիոն էֆեկտների գնահատման համար օգտագործվող ամենատարածված էկոնոմետրիկ մոդելներն են գրավիտացիոն մոդելները<sup>13</sup>։ Մոդելի ստանդարտ մասնագիրը ՀՆԱ–ից, երկրների միջև հեռավորությունից եւ լրացուցիչ փոփոխականների (ընդհանուր սահմանների, լեզվական տարբերությունների, սակագների եւ այլնի առկայություն) հավաքածուից, այդ թվում՝ ինտեգրացիայի համար պատասխանատու ֆիկտիվ փոփոխականից առեւտրային հոսքերի կախվածությունն է<sup>14</sup>։ Հետազոտությունների մեծ մասը,

<sup>12</sup> Նույնիսկ դինամիկ դիրքում, քանի որ մոդելի փուլերի քանակը պարտադիր կերպով չի համապատասխանում տվյալների հաճախականությանը (Grassini, 2009)։

<sup>13</sup> Ինչպես նշվում է գրականության մեջ, գրավիտացիոն մոդելը համարվում է տնտեսության մեջ ամենակայուն էմպիրիկ կախվածություններից մեկը (Porojan, 2001)։ Այդ մոդելների տեսական հիմնավորումները քննարկվում են զգալի թվով հետազոտություններում (Helpman E., Krugman, 1985, Deardorff, 1998, Anderson, van Wincoop, 2003)։

<sup>14</sup> Ֆիկտիվ փոփոխականը համարժեք է միավորի այն դեպքում, երբ երկրները պատկանում են մեկ ինտեգրացիոն միավորման, իսկ հակառակ դեպքում համարժեք է գրոյի։

որոնց դեպքում ինտեգրացիոն էֆեկտների գնահատման համար կիրառվում են գրավիտացիոն մոդելները, կառուցվում է պանելային տվյալների հիման վրա: Դա թույլ է տալիս միացնել լարային փոփոխականները եւ հաշվի առնել ներմուծողների եւ արտահանողների համար ֆիքսված («ըստ երկրների») էֆեկտները:<sup>15</sup>

Չնայած գրավիտացիոն մոդելի օգնությամբ՝ ինտեգրացիոն էֆեկտների գնահատմանը նվիրված աշխատանքների մեծ թվին, միայն առանձին հետազոտություններում է անցկացվում ճյուղային էֆեկտների գնահատում: Որպես կանոն, դրանցում ուսումնասիրվում են առանձին շուկաների մասով առևտրային հոսքերը, կամ գնահատվում է ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման ազդեցությունը ինտեգրացիոն միավորումը ստեղծելուց հետո:<sup>16</sup> Աշխատանքների մեծ մասում օգտագործվում են հավաքած տվյալները, ինչն անգամ դրանց մասնատման տեխնիկական հնարավորության առկայության դեպքում էապես սահմանափակում է արդյունքների մեկնաբանությունը:

Էկոնոմետրիկ մոդելների հիմնական առավելություններն են՝

մոդելի որակի գնահատման ֆորմալացված չափանիշների առկայությունը.

ռեգրեսիայում հսկողության տարբեր գործոնները հաշվի առնելու հնարավորությունը.

երկրների միջև առևտրային հոսքերի առնչությամբ պարզաբանումների բարձր ճշգրտությունը.

իրագործման պարզությունը (այդ թվում՝ նոր գործոնների ավելացումը):

Տվյալ տիպի մոդելների հիմնական թերությունների թվին են պատկանում՝

---

<sup>15</sup> Գրավիտացիոն մոդելը տարածական նմուշառման բազայում տալիս է ոչ կայուն արդյունքներ, քանի որ գնահատականները կարող են տարեց տարի փոփոխվել ինտեգրացիայից ստացված օգուտի ոչ գծային դինամիկայի հետևանքով (Ghosh, Yamarik, 2004):

<sup>16</sup> Նման հետազոտությունների օրինակներ են հետևյալ աշխատանքները՝ (ԶԵԱԲ, 2015a, ԶԵԱԲ, 2015b, Lejour, de Pavia, 2007, Philippidis, Sanjuan, 2007, Ravishankar, Stack, 2014): Ոլորտային տվյալների ներգրավմամբ՝ ինտեգրացիոն էֆեկտների գնահատումներն անցկացվել են, օրինակ, հետևյալ աշխատանքներում՝ (Bijsterbosch, Kolasa. 2010) (ՕՈԻՆ հոսքի ազդեցությունը) եւ (Chen et al. 2009) (ներմուծման մասով մրցակցության ազդեցությունը):

ապրանքային խմբերի տարանջատման վերաբերյալ էական գնահատականներ ստանալու բարդությունը<sup>17</sup>.

տվյալների ավելորդության խնդիրը. երկու հիմնական փոփոխականների՝ ՀՆԱ-ի և հեռավորության մեծ բացատրողական կարողությունը թույլ է տալիս գործնականորեն ցանկացած մասնագրի դեպքում ստանալ էական հավասարեցում (Schaefer et al, 2008).

մակրոտնտեսական ցուցանիշների վրա ինտեգրացիայի ազդեցության գնահատման անհնարիությունը (այդ թվում՝ առանց այլ մեթոդներ օգտագործելու սցենարային հաշվարկների համար կիրառել գնատականները).

տվյալների անկայունության դեպքում գնահատման մի քանի մեթոդների կիրառումը կարող է հանգեցնել գործակիցների՝ մասնավորապես, միավորման մեջ մտնելուց ստացված էֆեկտի գնահատականների չափից ավելի բարձրացմանը (Zwinkels, Beugelsdijk, 2010):

Այսպիսով, ինտեգրացիոն էֆեկտների գնահատման ամենատարածված երկու մեթոդները՝ CGE-մոդելները և գրավիտացիոն մոդելները, թույլ չեն տալիս տարանջատման մակարդակում ստանալ որակյալ արդյունքներ: Բացի այդ, ԵՄՄ-ում ինտեգրացիոն ներուժի գնահատման համար, դրա գոյության ոչ մեծ ժամկետը հաշվի առնելով, պահանջվում է օգտագործել վերջին արդիական տվյալները:<sup>18</sup>

Ճյուղային մակարդակում արդիական տվյալների մանրամասն գնահատականներ թույլ է տալիս ստանալ «ցածր կախված պտուղներ» որոնման մեթոդը:

### **«Ցածր կախված պտուղներ» որոնման մեթոդը**

Արտահանման աճի հեռանկարային ուղղությունների գնահատման յուրօրինակ մոտեցում, որը փոփոխությունից հետո կարելի է օգտագործել

<sup>17</sup> Տարանջատման գործընթացում մոդելի միջոցով առավել պակաս է հնարավոր պարզաբանել առևտրային հոսքերը, քանի որ հիմնական գործոնները (ՀՆԱ-ն և հեռավորությունը) չեն կարող տարանջատվել ըստ ապրանքային խմբերի:

<sup>18</sup> ՄԹԱԸ բազայի՝ ԵՄՄ մասնակից երկրների մասին տվյալները, որպես կանոն, ունեն ցածր որակ:



ինտեգրացիայից ստացված շահույթի գնահատման համար (այդ թվում՝ ներմուծման փոխարինման մասով), առաջարկված է Ռ. Հաուսմանի եւ համահեղինակների աշխատանքներում (Hausmann et al, 2007; Hausmann, Klinger, 2007):

Հեռանկարային ճյուղերի բացահայտման համար առաջարկված են երկու ցուցանիշներ՝ PRODY (ապրանքի «արդյունավետությունը») եւ EXPY (երկրի արտահանման զամբյուղի «արդյունավետությունը»): Առաջին ցուցանիշն ապրանքն արտահանող երկրների՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին կշռված մակարդակն է (կշիռ են հանդիսանում Բալասսայի ցուցանիշները, որոնցով չափվում է համեմատական առավելությունների մակարդակը)<sup>19</sup>: Երկրորդ ցուցանիշը երկրի կողմից արտահանվող ապրանքների «արդյունավետության» միջին կշռված մակարդակն է (կշիռ են հանդիսանում երկրի արտահանման կառուցվածքում ապրանքների մասնաբաժինները): Այն մեկնաբանվում է որպես երկրի՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մոդելային մակարդակ: Ապրանքի «արդյունավետության» եւ երկրի արտահանման զամբյուղի «արդյունավետության» միջեւ ամենամեծ դրական տարբերությամբ ապրանքները դասվում են հեռանկարային ապրանքների շարքին (երկրի արտահանման ընդհանուր «արդյունավետությունը» բարձրացնելու ունակ)՝ սակայն միայն այդ ապրանքների մասով մասնագիտացմանն անցնելու բարձր հավանականության պայմանով:

Այդ հավանականությունն ընտրվում է առնվազն երկու պայմանական հավանականություններից (առաջին ապրանքի մասով մասնագիտացման հավանականությունը՝ երկրորդ մասով մասնագիտացման դեպքում, եւ հակառակը)<sup>20</sup>: Ենթադրվում է, որ երկրում ամենից հեշտն այն ապրանքների արտահանման կազմակերպումն է, որոնք առնչվում են (միջազգային առևտրի օրինաչափություններին համապատասխան) արդեն արտահանվող ապրանքների հետ:<sup>21</sup>

<sup>19</sup> Բալասսայի ինդեքսը երկրի ընդհանուր արտահանման դեպքում մասնաբաժնի հարաբերակցությունն է՝ միջազգային ընդհանուր արտահանման դեպքում ապրանքի բաժնեմասի հետ (Balassa, 1965):

<sup>20</sup> Պայմանական հավանականությունը հաշվարկվում է երկու ապրանքների գծով (երկու ապրանքների մասով Բալասսայի ինդեքսները գերազանցում են միավորը) միաժամանակ մասնագիտացվող երկրների թվի՝ միայն մեկ ապրանքի գծով մասնագիտացվող երկրների թվին հարաբերակցությամբ:

<sup>21</sup> Մոտեցման առավել մանրամասն նկարագրությունը (ցուցանիշների հաշվարկման բանաձևերով)՝ տե՛ս Գնպղչենկո (2014):

Գրականության մեջ այդքան էլ մեծ թիվ չեն կազմում այն աշխատանքների օրինակները, որոնցում PRODY եւ EXPY ցուցանիշներն օգտագործվում են հեռանկարային ապրանքային խմբերի հայտնաբերման համար ինտեգրացիոն միավորումների շրջանակներում: Այսպիսով, Հարավային Աֆրիկայի զարգացման համայնքի օրինակի հիման վրա՝ ապրանքների «արդյունավետության» համեմատության օգնությամբ ցույց է տրվել, որ միավորման ներսում առեւտուրն առավել դիվերսիֆիկացված եւ բարձր տեխնոլոգիաներով հագեցած է, քան այն երկրների հետ առեւտուրը, որոնք դրա մեջ չեն մտնում (Mashayekhi et al, 2012)<sup>22</sup>: ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի օրինակի հիման վրա ցուցադրվել է, որ միավորման ներսում առեւտուրը բնութագրվում է մասնակից պետությունների արտահանման զամբյուղի առավել բարձր «արդյունավետությամբ» (Moncarz et al, 2016), ինչը թույլ է տալիս բարձրացնել այն ապրանքների արտահանման տեխնոլոգիական մակարդակը, որոնց մասով նրանք դեռեւս համեմատական առավելություններ չունեն:

Մոտեցման հիմնական առավելությունների շարքին հարկավոր է դասել՝

գնահատականներ ստանալու եւ տարանջատման մակարդակում ապրանքների փոխադարձ ազդեցությունը հաշվի առնելու հնարավորությունը (մինչեւ ԱՏԳ ԱԱ-ի 6 նիշ).

ըստ միջանկյալ ժամանակահատվածի եւ երկրի ու ապրանքների շրջանակի՝ տվյալների հասանելիությունը (գնահատականներ ստանալու համար բավական է ունենալ ներքին առեւտրի մասին տվյալներ).

արտահանման դիվերսիֆիկացման հեռանկարային ուղղությունների հայտնաբերման հնարավորությունը (ապրանքներ, որոնց մասով երկիրը մասնագիտացված չէ, սակայն դրա համար ունի նախադրյալներ).

մոտեցումը փոփոխելու լայն հնարավորություններ՝ էկոնոմետրիկ մեթոդների եւ միջճյուղային հաշվեկշռի մոդելների հետ դրա ինտեգրացիայի հաշվին:

---

<sup>22</sup> Այսպիսով, միավորման մեջ չմտնող երկրներ արտահանման համար PRODY ցուցանիշի միջին արժեքը կազմել է 13 հազ. դոլար, իսկ միավորման երկրներ արտահանման համար՝ 81 հազ. դոլար: Հետաքրքրական է, որ Վ. Կլինգերը Հարավաֆրիկյան նշված միության համար ստացել է նման արդյունք (Klinger, 2009):

Մոտեցման թերությունները՝

այն թույլ չի տալիս գնահատել մակրոտնտեսական ցուցանիշների վրա ինտեգրացիայի ազդեցությունը (այդ թվում՝ առանց դրա օգտագործման՝ սցենարային հաշվարկների համար կիրառել գնահատումներ այլ մեթոդների հետ միասին)։

նպատակահարմար չէ այն ապրանքների արտահանման աճի հեռանկարների գնահատման համար, որոնց մասով երկիրն արդեն ունի համեմատական առավելություն։

նախատեսված չէ առավել բարդ էֆեկտների հաշվարկման համար (այնպիսին, ինչպիսին է ընդհանուր ֆակտորային արտադրողականության աճը)։

այն թույլ չի տալիս որոշել էֆեկտների իրագործման ժամկետը, քանի որ խիստ իմաստով համարվում է ոչ թե կանխատեսում, այլ ներուժի գնահատում (համեմատական առավելությունների զարգացման սահմանափակումները հանելու պայմանով)։

այն չի կարող տալ էֆեկտների արժեքային ծավալի գնահատական։

Այդ եղանակով, ներկայումս կիրառվող մեթոդները ոչ ամբողջությամբ են համապատասխանում ճյուղային մակարդակում ինտեգրացիայից ստացված շահույթի եւ տնտեսության ոլորտների գնահատման համար (ապրանքային դիրքեր եւ ծառայությունների կատեգորիաներ), սակայն առկա են «ցածր կախված պտուղներ» մեթոդի փոփոխման չիրականացված հնարավորություններ՝ ինտեգրացիոն էֆեկտների գնահատման համար (3-րդ աղյուսակ)։

### Աղյուսակ 3. Առեւտրի աճի ներուժի գնահատման մոտեցումների խմբավորումը

Ապրանքային անվանացանկի մակարդակը	Առեւտրի աճի ներուժը	Ինտեգրացիայի հաշվին առեւտրի աճի ներուժը
Ազդեզացված (տնտեսությունն ամբողջությամբ, տնտեսության ճյուղերը)	Ընդհանուր հավասարակշռության առանձնացված մոդելները, գրավիտացիոն մոդելները	Ընդհանուր հավասարակշռության առանձնացված մոդելները, գրավիտացիոն մոդելները
Մանրամասնեցված (ապրանքային խմբերը)	«Ցածր կախված պտուղներ» որոնման մեթոդը	-

**2. Միությունում տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող  
ոլորտների որոշման վերաբերյալ առաջարկություններ եւ  
դրանց ապրոքացիայի արդյունքները**

Սույն զեկույցի նպատակներով՝ *տնտեսության ոլորտ* ասելով հասկանում ենք տնտեսական գործունեության տեսակների դասակարգչում (այսուհետ՝ ՏԳԴ) ներառված գործունեության տեսակ կամ ապրանքային դիրք՝ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ), Ծառայությունների ընդլայնված դասակարգման մեջ ներառված ծառայությունների կատեգորիա, որն արտահայտվում է վճարային հաշվեկշռով (այսուհետ՝ ԾԸԴՎՀ):

Կախված ինտեգրացիոն ներուժի (չափանիշի) տիպից՝ յուրաքանչյուր մեթոդիկա ներառում է փուլեր եւ պարունակում է մոտեցումներ, որոնք թույլ են տալիս անցկացնել անդամ պետությունների տնտեսությունների ոլորտների զարգացման ինտեգրացիոն հնարավորությունների համակողմանի վերլուծություն եւ գնահատում:

*Փուլ I. Անդամ պետությունների տնտեսությունների կառուցվածքի եւ դրանց փոխադարձ ու արտաքին կապերի մասին տվյալների հիման վրա ինտեգրացիոն ներուժի վերլուծությունը*

Տվյալ փուլը <sup>23</sup> ներառում է անդամ պետությունների տնտեսությունների կառուցվածքի, ընդհանուր առմամբ ԵԱՏՄ անդամ պետությունների միջեւ եւ երրորդ երկրների հետ փոխհարաբերությունների մակարդակի եւ բնույթի վերլուծություն: Վերլուծությունն անցկացվում է անդամ պետությունների տնտեսությունների ոլորտների տեսանկյունից՝ ուսումնասիրվող ինտեգրացիոն ներուժի տիպին համապատասխանող՝ վիճակագրական ցուցանիշների շարքի եւ մի շարք մոդելների օգտագործմամբ:

---

<sup>23</sup> «Ապագայի ճյուղերին» եւ պետական կարգավորմանն ուղղված մեթոդիկաների համար փուլը բացակայում է:

## Ծանոթագրություն՝

Օրինակ, տնտեսության յուրաքանչյուր ոլորտի համար ներմուծման փոխարինման չափանիշի դեպքում օգտագործվել է 8 ցուցանիշ, այդ թվում՝ Բալասայի<sup>24</sup> ինդեքսը եւ Գրուբել-Լլոիդի ինդեքսը<sup>25</sup>, արտահանման մեծացման չափանիշի համար՝ 13 ցուցանիշ, այդ թվում՝ Միխայելի ինդեքսը<sup>26</sup> եւ փոխլրացման ինդեքսը<sup>27</sup>:

Ինտեգրացիոն ներուժի *առկայությունը* որոշվում է ըստ տնտեսության յուրաքանչյուր ոլորտի համար բոլոր ցուցանիշների արժեքների վերլուծության<sup>28</sup>:

Այնուհետև, մոդելային գործիքակազմի օգնությամբ *գնահատվում է* ինտեգրացիոն ներուժը: Ընդ որում, որոշակի մեթոդիկաների (մեթոդիկաների խմբի) համար այն ունի իր առանձնահատկությունը՝

1) ներմուծափոխարինման, արտահանման մեծացման և մասնագիտացման մեթոդիկաների համար ներուժը հաշվարկվում է որպես առևտրի աճի ներուժի գնահատականների միջև տարբերություն. ա) երկրի՝ ԵԱՏՄ-ին անդամակցելու դեպքում և բ) երկրի՝ ինտեգրացիոն միավորման կազմի մեջ չլինելու դեպքում:

2) Բազմապատկական էֆեկտի և արտադրական շղթայի մեթոդիկաների համար տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ինտեգրացիոն ներուժի գնահատականը կազմվում է՝ հաշվի առնելով միջճյուղային կապերը, այսինքն՝ մեկ ճյուղի արտադրանքի պահանջարկի աճի ազդեցությունը մյուս բոլոր ճյուղերում արտադրության աճի վրա՝ վերջնական արտադրանքի արտադրության համար միջանկյալ ապրանքների լայն օղակի օգտագործման անհրաժեշտության հաշվին:

<sup>24</sup> Արտացոլում է տնտեսության ոլորտի կախվածությունը ներմուծումից (ուսումնասիրվող ոլորտի ներմուծման մասնաբաժինը՝ անդամ պետության ներմուծման ընդհանուր ծավալի տեսանկյունից)՝ տնտեսության նման ոլորտի մասով՝ համաշխարհային կտրվածքով միջին մակարդակի հետ համեմատած:

<sup>25</sup> Արտացոլում է տնտեսության որոշակի ոլորտում երկրի առևտրաշրջանառության ներճյուղային առևտրի մասնաբաժինը եւ բնութագրում է ներճյուղային կոոպերացիայի մասնաբաժինը:

<sup>26</sup> Չափում է երկրի ապրանքների եւ ծառայությունների արտահանման ու ներմուծման կառուցվածքում տարբերությունների խորությունը եւ երկրի արտահանման ոլորտում ապրանքի եւ ծառայության բաժնեմասի եւ երկրի ներմուծման ոլորտում նույն ապրանքի ու ծառայության բաժնեմասի միջև տարբերությունն է:

<sup>27</sup> Արտացոլում է երկրի արտահանման կառուցվածքի՝ երրորդ երկրների ներմուծման կառուցվածքին համապատասխանության աստիճանը, այսինքն՝ որոշ չափով, երկրի կողմից համաշխարհային շուկայում ապրանքների առաջարկի կառուցվածքի համապատասխանությունը բոլոր մյուս երկրների, բացառությամբ Միության անդամ պետությունների, պահանջարկի կառուցվածքին:

<sup>28</sup> Մասնավորապես, ներմուծափոխարինման դեպքում ինտեգրացիոն ներուժը մեծամասամբ առկա է տնտեսության այն ոլորտներում, որոնցում Բալասայի ինդեքսը բարձր արժեք ունի: Միևնույն ժամանակ, Գրուբել-Լլոիդի ինդեքսի տեսանկյունից՝ ներմուծափոխարինումն առկա կլինի տնտեսության՝ ցուցանիշի ցածր արժեք ունեցող բոլոր ոլորտներում:

3) «Ապագայի ճյուղերը» որոշելու մեթոդիկայում մոդելային միջոցներ չեն կիրառվել, քանի որ տնտեսության նոր ճյուղերի և ոլորտների առաջացումը կանխատեսելու համար առկա չեն համապատասխան տվյալներ:

4) Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտները և պետական մասնակցությամբ ընկերությունների բարձր մասնաբաժին ունեցող ոլորտները որոշելու մեթոդիկայում կիրառվում են վիճակագրական մեթոդներ:

*Փուլ II. Անդամ պետությունների և, ընդհանուր առմամբ, Միության զարգացման՝ ազգային և վերազգային ճյուղային ու ոլորտային առաջնահերթությունների հաշվի առնելը*

Տվյալ փուլի շրջանակներում անցկացվում է անդամ պետությունների գործող նորմատիվ իրավական ակտերի և Միության մարմինների ակտերի վերլուծություն՝ դրանցում տնտեսության այն ոլորտների հայտնաբերման մասով, որոնց զարգացմամբ ազգային և վերազգային մակարդակով շահագրգռված են անդամ պետությունները: Այդպիսի ակտերի օրինակ կարող են լինել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարությունները, զարգացման ազգային ճյուղային ռազմավարությունները (օրինակ՝ Ղազախստանի Հանրապետության արդյունաբերական-նորարարական զարգացման 2015-2019 թվականների պետական ծրագիրը, Ռուսաստանի Դաշնության «2013-2025 թվականների ավիացիոն արդյունաբերության զարգացումը» պետական ծրագիրը և այլ ակտեր), Հանձնաժողովի խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները (օրինակ՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Ծառայությունների այն ոլորտների (ենթաոլորտների) ցանկի հաստատման մասին, որոնցում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում գործում է ծառայությունների միասնական շուկան» թիվ 110 որոշում, Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների մասին» թիվ 9 որոշում):

*Փուլ III. Տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների վերջնական ցանկի ձևավորում*

Տնտեսության՝ ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների նախնական ցանկը կազմվում է՝ մեթոդիկաների բոլոր փուլերի ապրոբացիայի արդյունքների հիման վրա ստացված ցանկերը հաշվի առնելով: Ցանկն առանձին ձևավորվում է յուրաքանչյուր անդամ պետության եւ, ընդհանուր առմամբ, Միության համար: Միության ինտեգրացիոն ներուժ ասելով՝ հասկանում ենք անդամ պետությունների ամբողջ ինտեգրացիոն ներուժը:

Նախնական ցանկը ստուգվում է տեղեկատվական բովանդակության տեսանկյունից: Տեղեկատվական բովանդակության ստուգման նպատակն է տնտեսության այն ոլորտների հանումը, որոնք չնայած բովանդակային համապատասխանության բացակայության, ներառվել են այդ ցանկում վիճակագրական չափանիշներին ֆորմալ համապատասխանության պատճառով: Նշված համապատասխանությունը որոշվում է անդամ պետությունների ճյուղային փորձագետների եւ Հանձնաժողովի կողմից:

Հաշվի առնելով բովանդակային համապատասխանության ստուգման արդյունքները, ձևավորվում է տնտեսության այն ոլորտների վերջնական ցանկը, որոնք ունեն համապատասխան ինտեգրացիոն ներուժ անդամ պետությունների համար առանձին եւ, ընդհանուր առմամբ, Միության համար: Նշված ցանկերը դասակարգվում են ինտեգրացիոն ներուժի քանակական գնահատականի հիման վրա:

Համապատասխանաբար, տնտեսության այն ճյուղերը, որոնք ունեն բարձր աստիճան, ինտեգրացիոն համագործակցության նպատակների համար համարվում են առավել առաջնահերթ:

## **2.1. Տնտեսության՝ բարձր արդիականություն եւ (կամ) Միության շրջանակներում կոոպերացիայի հաշվին ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտները**

Տնտեսության՝ բարձր արդիականություն եւ (կամ) Միության շրջանակներում կոոպերացիայի հաշվին ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտների սահմանման մեթոդիկայի հիմնական գաղափարն այն ոլորտների հայտնաբերումն է, որոնցում ԵԱՏՄ կազմում գտնվող երկրում ներմուծման փոխարինման ներուժն ավելի փոքր է, քան ներմուծման փոխարինման ազգային ներուժը:

Այն հիմնական գործոնները, որոնց վերլուծությունները թույլ են տալիս տնտեսության ոլորտում ինտեգրացիոն ներուժի առկայության մասին եզրակացություն անել, հետեւյալն են՝

ա) ապրանքների (ծառայությունների) արտաքին առեւտրի մասով անդամ պետությունների համեմատական առավելությունները՝ աշխարհի այլ երկրների հետ համեմատած (աշխարհի բոլոր երկրների մասով որոշվում են Բալասսայի ինդեքսով).

բ) անդամ պետությունների եւ, ընդհանուր առմամբ, Միության փաստացի եւ հնարավոր ներմուծման կառուցվածքը:

Յուրաքանչյուր անդամ պետության համար ներմուծման փոխարինման ազգային ներուժը հաշվարկվում է աշխարհի մյուս երկրների հետ համեմատած՝ համեմատական առավելությունների հիման վրա՝ հաշվի առնելով արտաքին առեւտրի ձեւավորված համակարգը (Բալասսայի ինդեքսը): Ներմուծման մասով Բալասսայի՝ բարձր արժեքով ինդեքս ունեցող ապրանքային դիրքերը (այսինքն՝ համեմատած այլ երկրների հետ՝ ներմուծումից մեծ կախվածությամբ) կունենան ներմուծման փոխարինման բարձր ներուժ, այն պայմանով, որ երկիրը լուրջ կախվածություն չունենա այն ապրանքների ներմուծումից, որոնք արտադրության մեջ առնչվում են դրանց հետ:



Մեթոդիկան թույլ է տալիս ուսումնասիրել երկրի ներմուծման փոխարինման ներուժն «ինտեգրացիայի» իրավիճակում եւ «առանց ինտեգրացիայի» իրավիճակում:

Այն դեպքում, երբ երկիրը ինտեգրացիոն միավորման մասնակից չէ, ենթադրվում է, որ ինչպես երրորդ երկրներից ներմուծման, այնպես էլ գործընկեր երկրներից Միություն ներմուծման համար պահանջվում է փոխարինում:

Որպես Միության անդամ՝ երկրի ներմուծման փոխարինման հնարավորությունների գնահատման դեպքում ըստ մեթոդիկայի ենթադրվում է, որ ինտեգրացիոն միավորման շրջանակներում անդամ պետություններից ներմուծումը դիտարկվում է որպես ԵԱՏՄ-ի ներքին առևտրի մի մաս, եւ այդ պատճառով փոխարինում չի պահանջվում: Տվյալ մոտեցումը համապատասխանում է առավել հաջող ինտեգրացիոն միավորումների գործունեության փորձին: Գործընկեր երկրներից ապրանքների եւ ծառայությունների ներմուծման փոխարինման անհրաժեշտության բացառումը երկրի վրա ազդում է հետեւյալ կերպ:

Առաջին հերթին, փոխվում են երկրի համեմատական մրցակցային առավելությունները: Մասնավորապես, առաջին տեղում կհայտնվի երրորդ երկրների հետ առևտրի առավելությունը (տեղի կունենա ներմուծման կառուցվածքի եւ ծավալի, ինչպես նաեւ Բալասսայի ինդեքսի փոփոխություն): Այսպես, եթե երկրի ապրանքների ներմուծման հիմնական մասն իրականացվի այլ անդամ պետությունների կողմից, ապա ԵԱՏՄ-ի շրջանակներում ինտեգրացիան կհանգեցնի նրան, որ երկրի կախվածությունը ներմուծումից էապես կկրճատվի, քանի որ անդամ պետություններից ներմուծումը կդիտարկվի որպես սեփական արտադրությանը հավասարազոր: Արդյունքում ինտեգրացիայի գործընթացում տեղի կունենա ներմուծման փոխարինման ճյուղային առաջնահերթությունների փոփոխություն:

Երկրորդ հերթին, նոր մրցակցային առավելությունների շնորհիվ կձեւավորվի առանձին ներքին շուկաներում երրորդ երկրներից ներմուծման բաժնեմասի կրճատման ներուժ, այդ թվում՝ ԵԱՏՄ այլ անդամ պետությունների ընկերությունների հետ կոոպերացիայի հաշվին:

Մեթոդիկայով սահմանվում է, որ ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժն ըստ տնտեսության ոլորտի (կոնկրետ ապրանքի եւ ծառայության) գոյություն ունի, եթե որպես Միության անդամ՝ երկրի ներմուծման փոխարինման ներուժն ավելի փոքր է (ուսումնասիրվում է միայն երրորդ երկրներից ներմուծումը), քան երկրի ներմուծման փոխարինման ներուժն առանձին: Դա վկայում է այն մասին, որ ներմուծումից կախվածության նվազեցման գործում դրական ներդրում ունի անդամ պետությունների հետ անմիջապես փոխադարձ առևտուրը: Այդ դեպքում, Միության անդամ պետությունների միջև ձեւավորված փոխադարձ առևտրի եւ արտադրական տեխնոլոգիական կապերի կառուցվածքն ունի զարգացման եւ աճի ներուժ:

Մեթոդիկայի գործնական ապրոբացիան թույլ է տվել ձեւավորել տնտեսության ոլորտների ցանկեր (ապրանքների համար մանրամասնում՝ ԱՏԳ ԱԱ-ի 4 նշան, ծառայությունների համար՝ ԾԸԴՎՀ), որոնք դասակարգվել են ընդհանուր առմամբ Միությունում եւ անդամ պետություններում ներմուծման փոխարինման ներուժի մեծությամբ: Հայտնաբերվել են ԵՍՏՄ-ի շրջանակներում ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ ունեցող ընդամենը *274 ապրանքային խմբեր եւ ծառայությունների 4 կատեգորիաներ:*


Առաջին 20 դիրքերում տնտեսության ոլորտի ցանկում գումարային ազդեցությունից ստացվում է ավելի, քան 70 տոկոս: Ըստ այդմ, ներուժը՝

ավելի, քան 100 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 14 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 5 տոկոսը),

ավելի, քան 50 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 20 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 7 տոկոսը),


ավելի, քան 10 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 90 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 32 տոկոսը),

ավելի, քան 1 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 182 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 65 տոկոսը):



Նկար 1. Ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային խմբերի և ծառայությունների կատեգորիաների մասնաբաժինը՝ ԱՏԳ ԱԱ-ի 4 նիշանոց ապրանքային դիրքերի և ԾԼԴՎՀ-ի ծառայությունների կատեգորիայի ընդհանուր թվով

Միության շրջանակներում այն ներմուծման փոխարինման ներուժը, որին կարելի է հասնել ինտեգրացիոն համագործակցության հաշվին, 10 տոկոսով գերազանցում է ներմուծման փոխարինման ամբողջ ազգային ներուժը:



Նկար 2. ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների համար Միության շրջանակներում կոոպերացիայի հաշվին ներմուծման փոխարինման ներուժը

Միությունում ներմուծման փոխարինման առավել մեծ ներուժ ունեցող ապրանքների սեզամենտում հիմնականում ներառված է հետեւյալը՝

1. *Արդյունաբերական նշանակության ապրանքները.*<sup>28</sup> թեթեւ մարդատար ավտոմոբիլներ, շինարարական տեխնիկա (բուլդոզերներ, էքսկավատորներ, ուղեհարթիչներ), շարժիչային տրանսպորտային միջոցների մասեր եւ պարագաներ, հաշվողական մեքենաներ, ռետինի եւ պլաստմասսաների մշակման սարքավորումներ եւ այլն (Միության ընդհանուր ինտեգրացիոն ներուժի գրեթե 30 տոկոսը):

Ստացված արդյունքները վկայում են արդյունաբերական քաղաքականության ոլորտում անդամ պետությունների համագործակցության կարելությունների մասին, ինչը նախատեսված է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով: Հաշվի առնելով ավտոտրանսպորտային տեխնիկայի արտադրության գործող հզորությունների առկայությունը, այդ թվում՝ անդամ պետությունների տարածքում հավաքման արտադրության բացումը՝ հեռանկարային է համարվում արտադրանքի այդպիսի տեսակի ազգային պահանջարկի որոշման, ԱՀԿ-ի սկզբունքներին, կանոններին ու նորմերին չհակասող՝ Միության ներքին շուկայում պահանջարկի խթանման մեխանիզմների մշակման, արժեքի ստեղծման շղթաների գծով փոխազդեցության համաձայնեցման մասով համագործակցության ակտիվացումը:

2. *Դեղամիջոցներ՝ թերապեւտիկ եւ պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար* (Միության ընդհանուր ինտեգրացիոն ներուժի գրեթե 8 տոկոսը):

Ընդ որում, Ղրղզստանի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության համար ԵԱՏՄ-ում ինտեգրացիան թույլ կտա երրորդ երկրներից դեղերի ներմուծումը կրճատել 30 տոկոսով:<sup>29</sup> Դեղագործական ոլորտի զարգացումը Միության անդամ պետությունների մեծ մասում համարվում է գերակա ազգային խնդիր եւ համընկնում է ինտեգրացիոն օրակարգի միջոցառումների – 2016 թվականից դեղամիջոցների եւ բժշկական արտադրատեսակների միասնական շուկայի գործունեության մեկնարկի հետ:


<sup>28</sup> Համեմատած 2012 թվականի մակարդակի հետ:

*Ազրոսարդյունաբերական համալիրի արտադրանքը*, որի ներմուծման փոխարինման արդիականությունը նշվում է բոլոր անդամ պետությունների կողմից, ներկայացված է այն ապրանքների մեծ խմբով, որոնք, որպես կանոն, ընդգրկված են ցանկի մեջտեղում կամ վերջում՝ ըստ ներմուծման փոխարինման ծավալի: Դա արտացոլում է գյուղատնտեսական արտադրանքի շուկաների առանձնահատկությունը, որոնց համար մի կողմից՝ արտադրանքի որոշ տեսակների արտադրության համար պահանջվում են բնակլիմայական պայմաններ, իսկ մյուս կողմից՝ այդպիսի պայմանների առկայության դեպքում բնութագրվում են Միության ընդհանուր շուկայում անդամ պետությունների ներքին արտադրության բարձր մասնաբաժնով: Ապրանքային դիրքերի մի ամբողջ շարքի համար հայտնաբերվել է Միությունում ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ՝ մասնավորապես, խոզի մսի եւ ընտանի թռչնի մսի, լոլիկի, խաղողի գինու, մրգային հյութերի եւ այլնի համար:

Ծառայությունների ոլորտում բոլոր անդամ պետությունների համար ներմուծման փոխարինման ամենամեծ ինտեգրացիոն ներուժն ունեն տրանսպորտային ծառայությունները՝ երրորդ երկրներից ներկրվող տրանսպորտային ծառայությունների ծավալի մինչեւ 20 տոկոսը: Հաշվի առնելով ԵԱՏՄ-ի էական տարանցիկ ներուժը եւ Միության անդամ պետությունների տարածքում տրանսպորտային փոխադրումների ազատականացման հնարավորությունները՝ տնտեսության տվյալ ոլորտում ինտեգրացիոն համագործակցության խորացումը հեռանկարային է:

Տնտեսության՝ ԱՏԳ ԱԱ չորս նիշերի մակարդակով մանրամասնեցված ոլորտները, որոնք ունեն ԵԱՏՄ-ում ներմուծման փոխարինման ներուժ, ագրեգացվել են մինչեւ գործունեության տեսակի մակարդակը (տնտեսական գործունեության ազգային դասակարգիչներին համապատասխան)՝ տնտեսության մեծ հատվածների ինտեգրացիոն էֆեկտների մասշտաբավորման նպատակով<sup>30</sup> (տե՛ս նկար 3, աղյուսակ 4):

<sup>29</sup> Գործունեության՝ այստեղ եւ այսուհետ օգտագործվող տեսակները համարվում են շատ խոշորացված՝ միասնական ապրանքացանկում «Օախսեր-Թողարկում» աղյուսակների մասով անդամ պետությունների պաշտոնական վիճակագրության ներկայացման անհրաժեշտությունից ելնելով:



Նկար 3. ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների համար Միության շրջանակներում կոոպերացիայի հաշվին ներմուծման փոխարինման ներուժը՝ ըստ գործունեության տեսակների

Բացի այդ, կախված դասակարգման չափանիշներից՝ կարելի է առանձնացնել տնտեսության՝ ներմուծման փոխարինման առավելագույն բացարձակ գնահատական ունեցող ոլորտները (ԱՄՆ դոլարով), ինչպես նաև տնտեսության՝ երրորդ երկրներից ներմուծման փոխարինման ամենամեծ մասնաբաժինն ունեցող ոլորտները (տոկոսով) (տե՛ս աղյուսակ 4):

**Աղյուսակ 4. Գործունեության այն տեսակների ցանկը, որոնք դասակարգված են ըստ ներմուծման փոխարինման ինտեգրացիոն էֆեկտի ծավալի՝ առաջատար-ապրանքների նշմամբ**

Գործունեության տեսակը	ՏԳԴ ծածկագիրը (ՇԸԴՎՀ)	Ներմուծման փոխարինման ներուժը՝ ըստ գործունեության տեսակի, մլն ԱՄՆ դոլար	Երրորդ երկրներից ներմուծման փոխարինման մասնաբաժինը, տոկոսը	Ապրանքային դիրքը՝ ներուժի բացարձակ ծավալի մասով առաջատար		Ապրանքային դիրքը՝ երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման մասնաբաժնի մասով առաջատար	
				Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Տրանսպորտային միջոցների եւ սարքավորումների արտադրություն	29-30	1 472,0	2,3	Թեթեւ մարդատար ավտոմոբիլներ	8703	Թեթեւ մարդատար ավտոմոբիլներ	8703
Մեքենաների եւ սարքավորումների արտադրություն	28	1.305,2	2,4	Բուլդոզերներ, ուղեհարթիչներ, էքսկավատորներ	8429	Փոխհաղորդիչ լիսեռներ եւ շոտովիկներ, ժանանիվներ եւ ատամնավոր փոխանցիչներ	8483
Քիմիական արտադրություն	20-21	911,8	2,2	Թերապեւտիկ դեղամիջոցներ	3004	Ինսեկտիցիդներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ	3808
Տրանսպորտային ծառայություններ	S205	634,4	2,9	-	-	-	-
Էլեկտրասարքավորումների, էլեկտրական եւ օպտիկական սարքավորումների արտադրություն	26-27	560,3	1,1	Հաշվողական մեքենաներ եւ դրանց բլոկները	8471	Օրթոպեդիկ հարմարանքներ, դողեր, մարմնի արհեստական մասեր, լսողական սպարատներ	9021
Մետալուրգիական արտադրություն եւ պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	24-25	352,1	1,3	Արտադրատեսակներ՝ սեւ մետաղներից, կոած կամ դրոշմած	7326	Արտադրատեսակներ՝ սեւ մետաղներից, կոած կամ դրոշմած	7326
Ռոյալթիներ եւ լիցենզային վճարներ	S266	181,6	2,3	-	-	-	-
Կաշվի արտադրություն, կաշվից արտադրատեսակներ եւ կոշիկների արտադրություն	15	136,3	2,4	Կոշիկներ եւ կոշիկներից կամ պլաստմասսայից կոշիկներ	6402	Ուղեպայուսակներ, ճամպրուկներ	4202
Մանրամթերքի, այդ թվում՝ ըմպելիքների եւ ծխախոտի արտադրություն	10-12	100,8	0,4	Գինիներ խաղողի	2204	Լոլիկներ՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի հավելման	2002

Ցեյուրզաթթային արտադրություն, հրատարակչական եւ պոլիգրաֆիական գործունեություն	17-18	91,7	1,4	Զուգարանի թուղթ	4818	Տպագրական այլ արտադրանք՝ ներառյալ տպագրված վերարտադրանկարները եւ լուսանկարները	4911
Մանածագործական եւ կարի արտադրություն	13-14	59,9	0,5	Սվիտերներ, պուլովերներ	6110	Այլ պատրաստի արտադրատեսակներ՝ ներառյալ հագուստի ձեւվածքները	6307
Ռետինե եւ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	22	58,2	0,5	Արտադրատեսակներ՝ վուլկանացված ռետինից՝ բացի կոշտ ռետինից	4016	Չվուլկանացված ռետինային խառնուրդ՝ սկզբնական ձեւերով կամ թիթեղների տեսքով	4005
Գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն	01-02	0,4	0,2	Խոզի թարմ միս՝ պաղեցրած կամ սառեցրած	0203	Խոզի թարմ միս՝ պաղեցրած կամ սառեցրած	0203
Այլ արտադրություններ	31-32	44,0	0,6	Եռանիվ հեծանիվներ, ինքնաշարժեր, տիկնիկներ	9503	Ավելներ, խոզանակներ, հատակի ձողափայտեր եւ փետուրե ավելիկներ	9603
Ֆինանսական ծառայություններ	S260	20,8	0,9	-	-	-	-
Փայտանյութի մշակում, փայտե արտադրատեսակների արտադրություն	16	20,2	1,0	Փայտատաշեղային սալեր	4410	Փայտատաշեղային սալեր	4410
Այլ ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն	23	19,1	0,4	Մալարկման քարեր, սալիկներ՝ երեսպատման, կերամիկական, ջնարակված	6908	Արտադրատեսակներ գիպսից	6809
Օգտակար հանածոների արդյունահանում՝ բացի վառելիքաէներգետիկ ռեսուրսներից	07-09	19,0	1,1	Տիտանի հանքաքարեր եւ խտահանքեր	2614	Տիտանի հանքաքարեր եւ խտահանքեր	2614
Մասնավոր անձանց մատուցվող ծառայություններ եւ մշակույթի ու հանգստի ոլորտի ծառայություններ	S287	14,5	1,1	-	-	-	-

\* Հաշվի առնելով ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ ունեցող՝ տնտեսության ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության այն ստուգման արդյունքները, որն անցկացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:



Ձկնորսություն, ձկնաբուծություն	03	2,4	0,3	Ձկներ՝ թարմ կամ պաղեցրած	0302	Ձկներ՝ թարմ կամ պաղեցրած	0302
Կոքսի, նավթամթերքների եւ միջուկային նյութերի արտադրություն	19	1,4	0,0	Ռադիոակտիվ քիմիական տարրեր, իզոտոպներ եւ դրանց միացությունները	2844	Ռադիոակտիվ քիմիական տարրեր, իզոտոպներ եւ դրանց միացությունները	2844

Անդամ պետությունների համար ԵՍՏՄ-ի շրջանակներում ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ամենաբարձր ներուժը հետեւյալ դիրքերում է (առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 18)՝

*Հայաստանի Հանրապետության համար՝* ֆեռոհամահալվածքներ՝ «ինտեգրացիայի հաշվին» երրորդ երկրներից ներմուծման ծավալի ավելի, քան 50 տոկոսի փոխարինման հնարավորությամբ (այստեղ եւ այսուհետ՝ 2012 թվականի մակարդակով),

*Բելառուսի Հանրապետության համար՝* արդյունաբերության քիմիական ճյուղի արտադրանք (էթիլենի պոլիմերներ, ինչպես նաեւ ինսեկտիցիդներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ)՝ երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման մինչեւ 50 տոկոս մասնաբաժնով,


*Ղազախստանի Հանրապետության համար՝* փոխարինման ներուժի գնահատականով բժշկական արտադրատեսակներ՝ երրորդ երկրներից ներմուծման ծավալի ավելի, քան 30 տոկոսը,

*Ղրղզստանի Հանրապետության համար՝* սեւ մետաղներից մետաղակառուցվածքներ՝ երրորդ երկրներից ներմուծման ծավալի ավելի, քան 20 տոկոսի փոխարինման ներուժով,


*Ռուսաստանի Դաշնության համար՝* սեւ մետաղներից արտադրատեսակներ՝ երրորդ երկրներից ամբողջ ներմուծման ավելի, քան 10 տոկոսի փոխարինման ներուժով:

Ելնելով անդամ պետությունների տնտեսությունների չափերից եւ կառուցվածքից՝ ԵՍՏՄ-ում ներմուծման փոխարինման ընդհանուր էֆեկտում եւ

գործունեության տեսակների մասով արդյունքներում դրանց ներդրումը տարբերվում է (տե՛ս նկար 4, նկար 5):



Նկար 4. Ներմուծման փոխարինման ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ներդրումը



Նկար 5. Գործունեության տեսակների մասով ներմուծման փոխարինման ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ներդրումը

Միությունում գործունեության տեսակների կտրվածքով՝ ընդհանուր առմամբ երրորդ երկրներից ներմուծման փոխարինման ամենամեծ հեռանկարն ունի մեքենաշինության եւ քիմիական արդյունաբերության որոշակի տեսակների արտադրանքը: Առանձին երկրների համար ներմուծման փոխարինման էական ներուժ է առկա տրանսպորտային ծառայությունների (Ղազախստանի Հանրապետություն եւ Ղրղզստանի Հանրապետություն), ինչպես նաեւ մետալուրգիայի եւ ֆինանսական գործունեության ոլորտում (Ռուսաստանի Դաշնություն):

Մույն զեկույցի 1-ին հավելվածում ներկայացված են տնտեսության այն ոլորտների սահմանման մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքները, որոնք ԵԱՏՄ-ում

կոռպորացիայի հաշվին ունեն ներմուծման փոխարինման ինտեգրացիոն ներուժ, դասակարգված են ըստ գործունեության տեսակների, այդ թվում՝ նշելով առաջին երեք տեղերը զբաղեցնող մանրամասնեցված ապրանքային դիրքերը (աղյուսակներ 8-9):

## **2.2. Տնտեսության՝ երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ներուժ ունեցող ճյուղերը**

Մեթոդիկայի հիմնական գաղափարը տնտեսության այն ոլորտների հայտնաբերումն է, որտեղ ԵԱՏՄ-ի կազմում գտնվող երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ներուժը գերազանցում է արտահանման աճի ազգային ներուժը:

Այն հիմնական գործոնները, որոնց վերլուծությունները թույլ են տալիս տնտեսության ոլորտում ինտեգրացիոն ներուժի առկայության մասին եզրակացություն անել, հետեւյալն են՝

ա) ապրանքների (ծառայությունների) արտաքին առեւտրի մասով անդամ պետությունների համեմատական առավելությունները՝ աշխարհի այլ երկրների հետ համեմատած (աշխարհի բոլոր երկրների մասով որոշվում են Բալասսայի ինդեքսով).

բ) երրորդ երկրներ եւ Միության անդամ պետություններ փաստացի եւ հնարավոր արտահանման կառուցվածքը:

Յուրաքանչյուր անդամ պետության համար երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ազգային ներուժը հաշվարկվում է աշխարհի մյուս երկրների հետ համեմատած՝ համեմատական առավելությունների հիման վրա՝ հաշվի առնելով արտաքին առեւտրի ձեւավորված համակարգը: Ընդ որում, արտահանման ծավալի հնարավոր աճը եւ դրա կառուցվածքի փոփոխությունները որոշվում են աշխարհի բոլոր երկրների, այդ թվում՝ անդամ պետությունների համար:

Մեթոդիկան թույլ է տալիս արտահանման մեծացման ներուժն ուսումնասիրել այն երկրներում, որոնք գտնվում են «ինտեգրացիայի» իրավիճակում եւ «առանց ինտեգրացիայի» իրավիճակում: Որպես Միության անդամ՝ երկրի ներուժի գնահատման դեպքում ըստ մեթոդիկայի ենթադրվում է, որ ինտեգրացիոն միավորման շրջանակներում գործընկեր երկրներ արտահանումը դիտարկվում է որպես ԵԱՏՄ-ի ներքին առևտրի մի մաս: Այն ազդում է երկրի արտահանման հնարավոր ծավալի եւ դրա կառուցվածքի վրա հետեւյալ կերպ:

Առաջին հերթին, փոփոխվում են երկրի համեմատական մրցակցային առավելությունները, քանի որ արտահանման պրոֆիլից հանվում են այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք արտահանվում են Միության գործընկեր երկրներ: Անդամ պետություններ արտահանումը կդիտարկվի որպես ներքին առևտրի անալոգ: Հետեւաբար, ներքին շուկայում հաջողությամբ իրացվող ապրանքների եւ ծառայությունների ցանկում ներառվում են միայն այն դիրքերը, որոնք արտահանվում են երրորդ երկրներ (այսինքն՝ նրանք, որոնց հաջողվել է հաղթահարել առևտրի լրացուցիչ խոչընդոտները):

Երկրորդ հերթին, մրցակցային նոր առավելությունները ձեւավորում են երրորդ երկրների շուկաներ արտահանման մեծացման համար ներուժը, այդ իսկ պատճառով փոփոխվում են հնարավոր արտահանման եւ դրա կառուցվածքի ծավալների գնահատականները: Որոշակի ապրանքի (ծառայության) արտահանման աճի ներուժի վրա ազդեցություն կթողնեն միայն այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք արտադրության մեջ միաժամանակ հարակից են դրանց, եւ որոնց մասով երկիրն ունի ամուր դիրքեր երրորդ երկրների շուկաներում:

Երրորդ հերթին, նոր մրցակցային առավելությունները պայմաններ կստեղծեն այն ապրանքների նոր խմբերի արտահանման համար, որոնք ավելի վաղ չեն արտահանվել, ինչն ապագայում կբարձրացնի արտահանման դիվերսիֆիկացիան:

Տնտեսության ոլորտում երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն ներուժը գոյություն ունի, եթե պետության՝

որպես Միության անդամ արտահանման ներուժը գերազանցում է տնտեսության տվյալ ոլորտի համար արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ազգային ներուժը: Դա նշանակում է, որ Միությունում մասնակցության հաշվին երկիրը կարող է ամրապնդել իր արտահանման ներուժը եւ ավելացնել երրորդ երկրներ կոնկրետ ապրանքի եւ ծառայության մատակարարումները: Ընդհակառակը, եթե արտահանման ավելացման ազգային ներուժը գերազանցում է պետության՝ որպես Միության անդամ արտահանման ներուժը, ապա ենթադրվում է, որ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն ներուժը բացակայում է:

Մեթոդիկայի ապրոբացիան թույլ է տվել համեմատել արտահանման ավելացման ազգային ներուժն անդամ պետությունների կողմից, ինչպես նաև որպես Միության անդամներ՝ դրանց ներուժը: Այդ արժեքների միջև տարբերությունները ձեւավորում են արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն ներուժը: Տնտեսության ոլորտների դասակարգումն իրականացվում է ինտեգրացիոն ներուժի գնահատականի, այսինքն՝ ինտեգրացիայի հաշվին արտահանման մեծացման հնարավոր ծավալի հիման վրա:

Մեթոդիկայի կիրառման արդյունքների հիման վրա ձեւավորվել են տնտեսության ոլորտների ցանկեր (ապրանքների համար մանրամասնում՝ ԱՏԳ ԱԱ-ի 4 նշան, ծառայությունների համար՝ ՇԸԴՎՀ ), որոնք դասակարգվել են անդամ պետությունների երրորդ երկրներ եւ, ընդհանուր առմամբ, Միություն արտահանման մեծացման ներուժի մեծությամբ:

Միության համար, ընդհանուր առմամբ, հայտնաբերվել է երրորդ երկրներ արտահանման մեծացման ինտեգրացիոն ներուժ ունեցող *276 ապրանքային դիրքեր եւ ծառայությունների 1 կատեգորիա:*


Առաջին 20 դիրքերում տնտեսության ոլորտի ցանկում գումարային ազդեցությունից ստացվում է ավելի, քան 55 տոկոս: Ըստ այդմ, ներուժը՝

ավելի, քան 100 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 25 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 9 տոկոսը),

ավելի, քան 50 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 49 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 18 տոկոսը),


ավելի, քան 10 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 107 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 39 տոկոսը),

ավելի, քան 1 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 181 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 65 տոկոսը),



Նկար 6. Երրորդ երկրներ արտահանման մեծացման և դիվերսիֆիկացման ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային խմբերի և ծառայությունների կատեգորիաների մասնաբաժինը՝ US\$ AA-ի 4 նիշանոց ապրանքային դիրքերի և ԾԸԴՎՀ-ի ծառայությունների կատեգորիայի ընդհանուր թվով

Միության շրջանակներում արտահանման մեծացման և դիվերսիֆիկացման ներուժը, որին կարելի է հասնել ինտեգրացիոն համագործակցության հաշվին, 22 տոկոսով գերազանցում է ամբողջ ազգային ներուժը:



Նկար 7. ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների համար երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն ներուժը

Ապրանքների սեզմենտում արտահանման մեծացման ամենամեծ հեռանկարն ունեն՝

1. *Արդյունաբերության քիմիական ճյուղի արտադրանքը* (Միության ընդհանուր ինտեգրացիոն ներուժի 40 տոկոսը)՝

անվադողեր եւ դողածածկեր,

Էթիլենի պոլիմերներ,

ածխաջրածիններ՝ ացիլիլիկ,

սալիկներ, ժապավեններ եւ պլաստմասսայե արտադրատեսակներ:

2. *Մեքենաշինության արտադրանքը*՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների՝ մոնիտորներ, պրոյեկտորներ, ծորակներ, կափույրներ (Միության ընդհանուր ինտեգրացիոն ներուժի 22 տոկոսը):

3. *Մետալուրգիական արտադրանքը*՝ ձողեր՝ երկաթից կամ պողպատից (Միության ընդհանուր ինտեգրացիոն ներուժի 14 տոկոսը):



4. *Թեթև մարդատար ավտոմոբիլները* (Միության ընդհանուր ինտեգրացիոն ներուժի 5,5 տոկոսը):

Ծառայությունների սեկտորը ցանկում ներկայացված է «Պետական ծառայություններ» կատեգորիայով՝ 277 դիրքերից բաղկացած վերջնական ցանկի 132-րդ մակարդակում:


Մեթոդիկայի պահանջներին համապատասխան՝ Հանձնաժողովն անցկացրել է տնտեսության՝ երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ներուժ ունեցող ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության ստուգում: Ըստ դրա արդյունքների՝ վերջնական ցանկը լրացվել է հետևյալ ապրանքային խմբերով՝

270900 «Հում նավթ եւ հում նավթամթերքներ՝ ստացված բիտումային հանքանյութերից».

2710 «Նավթ եւ նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից՝ բացառությամբ հում նավթի ու նավթամթերքների. այլ տեղում չնշված կամ չներառված արտադրանք, որը պարունակում է 70 տոկոս կամ ավելի զանգվածային բաժին նավթ կամ նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից, ընդ որում՝ այդ նավթամթերքներն արտադրանքի հիմնական բաղադրիչներն են. բանեցված նավթամթերքներ».

2711 «Նավթային գազեր եւ գազանման այլ ածխաջրածիններ».

Տնտեսության ԱՏԳ ԱԱ չորս նիշերի մակարդակով մանրամասնեցված ոլորտները, որոնք ունեն երրորդ երկրներ արտահանման մեծացման ներուժ, ագրեգացվել են մինչեւ գործունեության տեսակի մակարդակը (ազգային ՏԳԴ-ներին համապատասխան)՝ տնտեսության մեծ հատվածների ինտեգրացիոն էֆեկտների մասշտաբավորման նպատակով (տե՛ս նկար 8, աղյուսակ 5):



Նկար 8. Ըստ գործունեության տեսակների՝ ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների համար երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն ներուժը

Բացի այդ, կախված դասակարգման չափանիշներից՝ կարելի է առանձնացնել տնտեսության՝ արտահանման աճի առավելագույն բացարձակ գնահատում ունեցող ոլորտները (ԱՄՆ դոլարով), ինչպես նաև տնտեսության ոլորտները՝ ըստ երրորդ երկրներ արտահանման աճի տեմպերի ներուժի (տոկոսով) (տե՛ս աղյուսակ 5):

**Աղյուսակ 5. Երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման  
ինտեգրացիոն էֆեկտի ծավալի մասով գործունեության տեսակները՝ առաջատար-  
ապրանքների նշամբ**

Գործունեության տեսակը	ՏԳԴ ծածկագիրը (ՕԸԴՎՀ)	Ըստ գործունեության տեսակի՝ արտահանման մեծացման ներուժը, մլն ԱՄՆ դոլար	Արտահանման ինտեգրացիոն ներուժը, տոկոս	Ապրանքային դիրքը՝ ներուժի բացարձակ ծավալի մասով առաջատար		Ապրանքային դիրքը՝ ներուժի աճի տեմպի մասով առաջատար	
				Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Քիմիական արտադրություն	20-21	1 755,2	4,8	Էթիլենի պոլիմերներ՝ սկզբնական ձևերով	3901	Լեգիրված քիմիական տարրեր՝ նախատեսված էլեկտրոնիկայում օգտագործման համար	3818
Ռետինե եւ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	22	1 749,3	47,9	Անվադողեր եւ դողածածկեր՝ օդաճնշական, ռետինե, նոր	4011	Այլ արտադրատեսակներ պլաստմասսայից	3926
Մետալուրգիական արտադրություն եւ պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	24-25	1 196,8	1,7	Ձողեր՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից, առանց հետագա մշակման	7214	Ալյումինի թափոններ եւ ջարդոն	7602
Մեքենաների եւ սարքավորումների արտադրություն	28	995,0	14,5	Ծորակներ, կափույրներ, փականներ եւ նույնանման ամրաններ	8481	Տպագրական մեքենաներ	8443
Էլեկտրասարքավորումների, էլեկտրական եւ օպտիկական սարքավորումների արտադրություն	26-27	978,3	12,3	Մոնիտորներ եւ պրոյեկտորներ, ընդունիչ ապարատուրա՝ հեռուստատեսային կապի համար	8528	Էլեկտրական շարժիչներ եւ գեներատորներ՝ բացի էլեկտրագեներատորային կայանքներից	8501
Տրանսպորտային միջոցների եւ սարքավորումների արտադրություն	29-30	968,4	7,3	Թեթեւ մարդատար ավտոմոբիլներ	8703	Թեթեւ մարդատար ավտոմոբիլներ՝ նախատեսված մարդկանց փոխադրելու համար	8703
Ցելյուլոզաթղթային արտադրություն, հրատարակչական եւ պոլիգրաֆիական գործունեություն	17-18	343,6	8,0	Չուգարանի թուղթ	4818	Թուղթ եւ սովարաթուղթ՝ ներծծված, մակաշերտով, ներկված մակերեսով	4811
Մանրամթերքի, այդ թվում՝ ըմպելիքների եւ ծխախոտի արտադրություն	10-12	329,9	2,1	Պանրի տեսակներ եւ կաթնաշոռ	0406	Այլ սննդամթերք (սպիտակուցային խտածոներ, շաքարի օջարակներ եւ այլն)	2106

Այլ արտադրություններ	31-32	155,1	6,5	Ոսկերչական արտադրատեսակներ եւ դրանց մասերը՝ պատրաստված թանկարժեք մետաղներից	7113	Ոսկերչական արտադրատեսակներ եւ դրանց մասերը՝ պատրաստված թանկարժեք մետաղներից	7113
Կոքսի, նավթամթերքների եւ միջուկային նյութերի արտադրություն	19	141,1	0,1	Նավթային կոքս, նավթի կամ նավթամթերքների վերամշակման արդյունքում ստացված բիտում եւ այլ մնացորդներ	2713	Նավթային կոքս, նավթի կամ նավթամթերքների վերամշակման արդյունքում ստացված բիտում եւ այլ մնացորդներ	2713
Այլ ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն	23	100,9	4,2	Ապակե մանրաթել եւ դրանից պատրաստված արտադրատեսակներ	7019	Հանքաբամբակ, շերտավորված վերմիկուլիտ, փքված կավեր	6806
Փայտանյութի մշակում, փայտե արտադրատեսակների արտադրություն	16	71,2	1,2	Շինարարական հավաքովի կոնստրուկցիաներ	9406	Շինարարական հավաքովի կոնստրուկցիաներ	9406
Մանածագործական եւ կարի արտադրություն	13-14	33,0	1,7	Գործվածքներ՝ սինթետիկ համալիր թելերից	5407	Գործվածքներ՝ սինթետիկ համալիր թելերից	5407
Գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն	01-02	5,3	0,0	Երշիկներ եւ մսից, մսային ենթամթերքներից պատրաստված համանման մթերքներ	1601	Երշիկներ եւ մսից, մսային ենթամթերքներից պատրաստված համանման մթերքներ	1601
Օգտակար հանածոների արդյունահանում՝ բացի վառելիքաէներգետիկ ռեսուրսներից	07-09	5,2	0,0	Կավեր յլ	2508	Կավեր՝ այլ	2508
Պետական ծառայություններ	S291	5,1	0,4	-	-	-	-
Կաշվի արտադրություն, կաշվից արտադրատեսակներ եւ կոշիկների արտադրություն	15	4,9	0,9	Կոշիկի մասեր, դնովի միջատակեր, կրնկատակեր	6406	Կոշիկի մասեր, դնովի միջատակեր, կրնկատակեր	6406
Ձկնորսություն, ձկնաբուծություն	03	0,7	3,7	Ձկներ՝ թարմ կամ պաղեցրած	0302	Ձկներ՝ թարմ կամ պաղեցրած	0302

\* Հաշվի առնելով տնտեսության՝ երրորդ երկրներ արտահանման մեծացման ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության այն ստուգման արդյունքները, որն անցկացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Անդամ պետությունների համար երրորդ երկրներ արտահանման մեծացման էական ներուժ ունեն հետեւյալ դիրքերը (առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 18)՝

*Հայաստանի Հանրապետության համար՝* «Շարժիչային տրանսպորտային միջոցների մասեր եւ պարագաներ» ապրանքային դիրքը, որի համար «ինտեգրացիայի ներդրումը» (ներուժի հարաբերակցությունը՝ «ինտեգրացիայով» եւ «առանց ինտեգրացիայի») կազմում է 12 տոկոս,

*Բելառուսի Հանրապետության համար՝* ինտեգրացիոն էֆեկտի ընդհանուր գնահատականով՝ քիմիական ճյուղի արտադրանքը (10 ապրանքային դիրքեր, որոնց շարքում են էթիլենի պոլիմերները, անվադողերը եւ դողածածկերը, պլաստմասսայե արտադրատեսակները, լաքերը, ներկերը եւ այլն)՝ կոնկրետ դիրքից կախված՝ 38-ից 96 տոկոս: Մեթոդիկայի պահանջներին համապատասխան՝ Բելառուսի Հանրապետության կողմից անցկացվել է տնտեսության՝ երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ներուժ ունեցող ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության ստուգում: Ըստ դրա արդյունքների՝ առաջարկվել է վերջնական ցանկը լրացնել հետեւյալ ապրանքային դիրքերով՝

- մեքենաշինության արտադրանք,
- փայտի խորը մշակման արտադրանք,


*Ղազախստանի Հանրապետության համար՝* «Հաշվիչ մեքենաներ եւ դրանց բլոկները» (արտահանման աճը՝ 99 տոկոս) եւ «Խողովակներ, փողակներ ու սնամեջ տրամատներ՝ անկար, սեւ մետաղներից» (արտահանման աճը՝ 44 տոկոս) ապրանքային դիրքերը,

*Ղրղզստանի Հանրապետության համար՝* տնտեսության՝ ըստ կազմի խիստ դիվերսիֆիկացված, ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների ցանկը, որը ներառում է տնտեսության տարբեր ճյուղերի ապրանքային դիրքերը: Միեւնույն ժամանակ ներուժի արժեքային գնահատման արդյունքները վկայում են մեքենաշինության եւ ավտոմոբիլաշինության ճյուղերում արտահանման


զարգացման էական ներուժի առկայության մասին, հատկապես «Շարժիչային տրանսպորտային միջոցների մասեր եւ պարագաներ» ապրանքային դիրքի մասով (արտահանման աճը՝ 57 տոկոս),

*Ռուսաստանի Դաշնությանը* հատուկ է մեքենաշինության եւ մետալուրգիական ճյուղերի ապրանքային դիրքերի գերակշռությունը՝ «Թեթեւ մարդատար ավտոմոբիլներ՝ նախատեսված մարդկանց փոխադրելու համար» (արտահանման աճը՝ 16 տոկոս), «Ձողեր՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից» (+ 49 տոկոս), «Անվաղողեր եւ դողածածկեր՝ օդաճնշական ռետինե նոր» (+16 տոկոս):

Ելնելով անդամ պետությունների տնտեսության չափից եւ կառուցվածքից՝ ԵԱՏՄ-ում արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ընդհանուր էֆեկտում եւ գործունեության տեսակների մասով արդյունքներում դրանց ներդրումը տարբերվում է (տե՛ս նկար 9, նկար 10):



Նկար 9. Երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ներդրումը



Նկար 10. Երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ներդրումը՝ ըստ գործունեության տեսակների

Միությունում գործունեության տեսակների կտրվածքով՝ ընդհանուր առմամբ երրորդ երկրներ արտահանման ավելացման ամենամեծ հեռանկարն ունի մեքենաշինության, քիմիական արդյունաբերության եւ մետալուրգիայի որոշակի տեսակների արտադրանքը: Առանձին երկրների համար հեռանկարային է փայտե արտադրատեսակների, ցելյուլոզաթղթային արտադրատեսակների ու պոլիգրաֆիայի արտահանման ավելացումը (Ռուսաստանի Դաշնություն) եւ սննդամթերքի արտադրությունը (Ռուսաստանի Դաշնություն եւ Բելառուսի Հանրապետություն):

Սույն զեկույցի 1-ին հավելվածում ներկայացված են տնտեսության այն ոլորտների սահմանման մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքները, որոնք ունեն երրորդ երկրներ արտահանման մեծացման եւ դիվերսիֆիկացման ինտեգրացիոն ներուժ, ագրեգացված են ըստ գործունեության տեսակների, այդ թվում՝ նշելով առաջին երեք տեղերը զբաղեցնող մանրամասնեցված ապրանքային դիրքերը (աղյուսակներ 10-11):

### **2.3. Տնտեսության՝ երկրի մասնագիտացման հաշվին ներքին շուկա ապրանքների եւ ծառայությունների մատակարարումների աճի հեռանկարներ եւ Միությունում մրցակցային առավելություններ ունեցող ոլորտները**

Մեթոդիկայի հիմնական գաղափարն այն է, որ Միության շրջանակներում երկրի մասնագիտացման խորացման դեպքում Միության ներքին շուկա դրա արտադրանքի մատակարարմամբ հնարավոր է փոխարինել այլ անդամ պետություններ երրորդ երկրներից ներմուծումը՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ փոխադրումն ապահովելու պայմանով:

Տնտեսության յուրաքանչյուր ոլորտի մասով՝ ներքին շուկա մատակարարման աճի ինտեգրացիոն ներուժի սահմանման համար գնահատվում է ներմուծման փոխարինումն Միության համար՝ ընդհանուր առմամբ ,եւ Միության համար՝ առանց անդամ պետություններից յուրաքանչյուրի հաջորդաբար մասնակցության:



Փաստացի, տեղի է ունենում Միության՝ «երկրի մասնակցությամբ» եւ «առանց երկրի մասնակցության» ներմուծման փոխարինման ներուժի համեմատություն (ի տարբերություն ներմուծման փոխարինման մեթոդիկայի, որի դեպքում համեմատվում է յուրաքանչյուր անդամ պետության ներմուծման փոխարինման ներուժը՝ «առանց ինտեգրացիայի» եւ «ինտեգրացիայի» պայմաններում): Անդամ պետությունների եւ, ընդհանուր առմամբ, Միության ներմուծման փոխարինման ներուժը սահմանվում է աշխարհի այլ երկրների հետ համեմատած (Բալասսայի ինդեքսով)՝ ապրանքների (ծառայությունների) ներքին առևտրի մասով՝ անդամ պետությունների համեմատական առավելությունների վերլուծության միջոցով:

Եթե Միության՝ ինտեգրացիոն միավորումներում «երկրի մասնակցությամբ» ներմուծման փոխարինման ներուժի գնահատականն ավելի ցածր է, քան «առանց դրա մասնակցության», ապա նշանակում է, որ Միության շուկա երկրի արտահանման հոսքերը կարող են փոխարինել երրորդ երկրներից ներմուծվող ապրանքներին եւ (կամ) ծառայությունների մի մասը (այդ իսկ պատճառով ներմուծման փոխարինման ներուժի գնահատականները նվազում են):

Հակառակ իրավիճակում, երբ Միության՝ «երկրի մասնակցությամբ» ներմուծման փոխարինման ներուժն ավելի մեծ է, քան «առանց դրա մասնակցության», ենթադրվում է, որ տնտեսության տվյալ ոլորտի մասով ինտեգրացիոն ներուժը բացակայում է: Այդ դեպքում անդամ պետությունը կախված է համարվում երրորդ երկրներից ապրանքների եւ (կամ) ծառայությունների մատակարարումներից եւ, համապատասխանաբար, դրա ներմուծման պրոֆիլը հաշվի առնելը չի հանգեցնում Միության ներքին շուկա համանման ապրանքների փոխարինմանը:

Մեթոդիկան թույլ է տալիս ի հայտ բերել տնտեսության այն ոլորտները, որտեղ, մի կողմից, մեկ կամ մի քանի անդամ պետությունների համար առկա է երրորդ երկրներից ներմուծման փոխարինման ներուժ, իսկ մյուս կողմից՝ մնացած անդամ պետություններում տնտեսության այդ ճյուղի մասով ներմուծման փոխարինման ներուժը բացակայում է:

*Օրինակ*, եթե Ռուսաստանի Դաշնությունը չունի որոշակի ապրանքի ներմուծման փոխարինման պահանջումը (այսինքն՝ ներմուծման փոխարինման ներուժը բացակայում է), իսկ մյուս անդամ պետությունները երրորդ երկրներից զգալի ծավալով ներմուծում են այդ ապրանքները, ապա Միության շրջանակներում այդ ապրանքի արտադրության մեջ Ռուսաստանի մասնագիտացման հաշվին ԵԱՏՄ-ում Ռուսաստանի մասնակցությունը կարող է այլ անդամ պետությունների համար կրճատել ներմուծման փոխարինման պահանջումնքը:

Մեթոդիկայի գործնական ապրոբացիան թույլ է տվել ձեւավորել տնտեսության ոլորտների այն ցանկերը (ապրանքների համար մանրամասնում՝ ԱՏԳ ԱԱ-ի 4 նշան, ծառայությունների համար՝ ԾԸԴՎՀ դասակարգիչ), որոնք դասակարգվել են ըստ Միության ներքին շուկա մատակարարումների աճի ինտեգրացիոն ներուժի մեծության՝ անդամ պետությունների մասնագիտացման հաշվին: Միության համար, ընդհանուր առմամբ, հայտնաբերվել են *82 ապրանքային խմբեր* եւ *ծառայությունների 5 կատեգորիա*:


Առաջին 20 դիրքերում տնտեսության ոլորտի ցանկում գումարային ազդեցությունից ստացվում է ավելի, քան 95 տոկոս: Ըստ այդմ, ներուժը՝

ավելի, քան 100 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 4 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 5 տոկոսը),

ավելի, քան 50 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 7 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 8 տոկոսը),


ավելի, քան 10 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 21 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 24 տոկոսը),

ավելի, քան 1 մլն ԱՄՆ դոլար հայտնաբերվել է 51 ապրանքային դիրքերում (ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային դիրքերի թվի 59 տոկոսը):



Նկար 11. Մասնագիտացման ինտեգրացիոն ներուժ ունեցող ապրանքային խմբերի եւ ծառայությունների կատեգորիաների մասնաբաժինը՝ USG ԱԱ-ի 4 նիշանոց ապրանքային դիրքերի եւ ԾԸԴՎԷ-ի ծառայությունների կատեգորիայի ընդհանուր թվով

Մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքների հիման վրա՝ Միության ներքին շուկա մատակարարումների աճի ինտեգրացիոն ներուժի գնահատականը *8,5 տոկոսով* ավելի բարձր է, քան «առանց ինտեգրացիայի» պայմաններում:



Նկար 12. Ներքին շուկա ապրանքների և ծառայությունների մատակարարումների աճի ներուժը՝ ԵՄՄՄ անդամ պետությունների՝ երկրի մասնագիտացման հաշվին

Միության ներքին շուկա մատակարարումների մեծացման ամենամեծ ինտեգրացիոն ներուժը հայտնաբերվել է ծառայությունների ոլորտում: Առաջին երկու դիրքերի ներուժի գնահատականը ցանկում կազմում է Միության ինտեգրացիոն ներուժի ընդհանուր գնահատականի 60 տոկոսը՝

- 1) Տրանսպորտային ծառայություններ՝ երրորդ երկրներից ներմուծման 5,9 տոկոսը.
- 2) Այլ գործնական ծառայություններ՝ երրորդ երկրներից ներմուծման 1,2 տոկոսը:

Առաջին և երկրորդ դիրքերի միջև բացարձակ արժեքների էական տարբերությունը վկայում է Միության տարանցիկ ներուժի իրացման և երրորդ երկրներից տրանսպորտային ծառայությունների ներմուծման մասնաբաժնի կրճատման էական հնարավորությունների մասին:

<sup>31</sup> Այստեղ և այսուհետ՝ 2012 թվականի ներմուծման ծավալի հետ համեմատությունը:

Ծառայություններից բացի՝ ինտեգրացիոն ներուժ հայտնաբերվել է հետևյալ ապրանքային դիրքերում (առաջնահերթության կարգով)՝ «Խողովակներ, փողակներ եւ պրոֆիլներ՝ սեւ մետաղներից» (երրորդ երկրներից ներմուծման 40 տոկոսը), «Էլեկտրաէներգիա» (59%), «Անվաղողեր եւ դողածածկեր» (2,0%), «Բուլդոզերներ, ուղեհարթիչներ, էքսկավատորներ» (1,3%):

Հարկավոր է նշել փոխադարձ մատակարարումների հաշվին՝ գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի ներմուծման փոխարինման ունեցած ներուժը՝ մասնավորապես հետևյալ ապրանքային դիրքերի մասով՝ խաղող, սոյայի հատիկներ, բանջարեղեն, թռչնի միս, խաղողի գինիներ: Մեթոդիկայի պահանջներին համապատասխան՝ Հանձնաժողովն անցկացրել է տնտեսության՝ երկրի մասնագիտացման հաշվին ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության ստուգում: Ըստ դրա արդյունքների՝ առաջարկվել է լրացնել վերջնական ցանկը՝

1) հետևյալ ապրանքային դիրքերով՝

տավարի միս, կաթ եւ կաթնամթերք, պտուղներ եւ հատապտուղներ,

270900 «Հում նավթ եւ հում նավթամթերքներ՝ ստացված բիտումային հանքանյութերից».

2710 «Նավթ եւ նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից՝ բացառությամբ հում նավթի ու նավթամթերքների. այլ տեղում չնշված կամ չներառված արտադրանք, որոնք պարունակում են 70 տոկոս կամ ավելի զանգվածային բաժին նավթ կամ նավթամթերքներ՝ ստացված բիտումային ապարներից, ընդ որում՝ այդ նավթամթերքներն արտադրանքի հիմնական բաղադրիչներն են. բանեցված նավթամթերքներ».


2711 «Նավթային գազեր եւ գազանման այլ ածխաջրածիններ».

2) ծառայությունների ոլորտներով (ենթաոլորտներով)՝

որոնցում գործում է ծառայությունների միասնական շուկա Միության շրջանակներում (Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 110 որոշում),

որոնց մասով Միության շրջանակներում ծառայությունների միասնական շուկայի ձևավորումը կիրականացվի ազատականացման պլաններին համապատասխան (անցումային շրջանում) (Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 30 որոշում):

Տնտեսության՝ ԱՏԳ ԱԱ չորս նիշերի մակարդակով մանրամասնեցված այն ոլորտները, որոնք ունեն ԵԱՏՄ-ի շրջանակներում անդամ պետությունների մասնագիտացման հաշվին՝ Միության ներքին շուկա մատակարարումների մեծացման ներուժ, ագրեգացվել են մինչև գործունեության տեսակների մակարդակը՝ տնտեսության մեծ հատվածների ինտեգրացիոն էֆեկտների մասշտաբավորման նպատակով (տե՛ս նկար 13, աղյուսակ 6):



Նկար 13. Ներքին շուկա ապրանքների և ծառայությունների մատակարարումների աճի ներուժը՝ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ երկրի մասնագիտացման հաշվին՝ ըստ գործունեության տեսակների

Բացի այդ, կախված դասակարգման չափանիշներից՝ կարելի է առանձնացնել տնտեսության՝ ներքին շուկա մատակարարումների մեծացման առավելագույն բացարձակ գնահատական ունեցող ոլորտները (ԱՄՆ դոլարով), ինչպես նաև տնտեսության՝ երրորդ երկրներից ներմուծման փոխարինման ամենամեծ մասնաբաժինն ունեցող ոլորտները (տոկոսով) (տե՛ս աղյուսակ 6):

**Աղյուսակ 6. Ներքին շուկա ապրանքների եւ ծառայությունների  
մատակարարումների աճի ինտեգրացիոն էֆեկտի ծավալի մասով գործունեության  
տեսակները՝ երկրի մասնագիտացման հաշվին՝ նշելով առաջատար ապրանքները**

Գործունեության տեսակը	ՏԳԴ ծածկագիրը (ՇԸԴՎՀ)	Ներուժը՝ ըստ գործունեության տեսակի, մին ԱՄՆ դոլար	Երրորդ երկրներից ԵԱՏՄ ներմուծման ներուժի մասնաբաժինը, տոկոս	Ապրանքային խումբը՝ բացարձակ ծավալի մասով առաջատար		Ապրանքային խումբը՝ երրորդ երկրներից ԵԱՏՄ ներմուծման ներուժի մասնաբաժնի մասով առաջատար	
				Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Տրանսպորտային ծառայություններ	S205	1 281,3	5,9	-	-	-	-
Մետալուրգիական արտադրություն եւ պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	24-25	434,3	1,6	Խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ (պրոֆիլներ)՝ բաց կարով, եռակցման կամ գամած, սեւ մետաղներից	7306	Ոսկի չմշակված	7108
Այլ գործնական ծառայություններ	S268	309,6	1,2	-	-	-	-
Էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրություն եւ բաշխում	35-39	173,6	59,3	Էլեկտրաէներգիա	2716	Էլեկտրաէներգիա	2716
Մեքենաների եւ սարքավորումների արտադրություն	28	75,9	0.1	Բուլդոզերներ, ուղեհարթիչներ, էքսկավատորներ	8429	Լվացքի մեքենաներ	8450
Ռետինե եւ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	22	58,1	0,5	Անվաղողեր եւ դողաձածկեր՝ օդաճնշական, ռետինե, նոր	4011	Անվաղողեր եւ դողաձածկեր՝ օդաճնշական, ռետինե, նոր	4011
Տրանսպորտային միջոցների եւ սարքավորումների արտադրություն	29-30	41,3	0.1	Շարժիչով վագոններ, բաց հենահարթակներ	8603	Շարժիչով վագոններ, բաց հենահարթակներ	8603
Այլ ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն	23	41,2	0,8	Ապրանքների պահման կամ փաթեթավորման համար ապակե տարողություններ, պահածոյացման համար բանկաներ	7010	Ապրանքների պահման կամ փաթեթավորման համար ապակե տարողություններ, պահածոյացման համար բանկաներ	7010
Քիմիական արտադրություն	20-21	40,8	0.1	Ածխածին	2803	Ածխածին	2803



Գործունեության տեսակը	ՏԳԴ ծածկագիրը (ՕԸԴՎՀ)	Ներուժը՝ ըստ գործունեության տեսակի, մլն ԱՄՆ դոլար	Երրորդ երկրներից ԵԱՏՄ ներմուծման ներուժի մասնաբաժինը, տոկոս	Ապրանքային խումբը՝ բացարձակ ծավալի մասով առաջատար		Ապրանքային խումբը՝ երրորդ երկրներից ԵԱՏՄ ներմուծման ներուժի մասնաբաժնի մասով առաջատար	
				Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը		Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	
Մնդամթերքի, այդ թվում՝ ըմպելիքների եւ ծխախոտի արտադրություն	10-12	40,8	0.1	Ածիկային լուծամզուք, պատրաստի սննդամթերք պատրաստված այլուրից	1901	Ածիկային լուծամզուք, պատրաստի սննդամթերք պատրաստված այլուրից	1901
Հեռահաղորդակցման ծառայություններ	S245	29,1	1,0	-	-	-	-
Մասնավոր անձանց մատուցվող ծառայություններ եւ մշակույթի ու հանգստի ոլորտի ծառայություններ	S287	25,2	2.0	-	-	-	-
Մանածագործական եւ կարի արտադրություն	13-14	23.8	0.2	Կոստյումներ, ժակետներ, շրջագգեստներ, կիսաշրջագգեստներ, տաբատներ, կիսատաբատներ՝ կանանց համար	6204	Վուշի մանվածք	5306
Համակարգչային եւ տեղեկատվական ծառայություններ	S262	18.9	0.7	-	-	-	-
Այլ արտադրություններ	31-32	16.6	0.2	Կահույք՝ նստելու համար	9401	Այլ թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր՝ բացի չժրջանակած կամ չամրացված ալմաստներից	7103
Կաշվի, կաշվից արտադրատեսակների արտադրություն եւ կոշիկեղենի արտադրություն	15	9.5	0.2	Կաշի՝ դաբադումից հետո լրացուցիչ մշակում անցած կամ խոշոր եղջերավոր անասունների մորթերից	4107	Կաշի՝ դաբադումից հետո լրացուցիչ մշակում անցած կամ խոշոր եղջերավոր անասունների մորթերից	4107
Գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն	01-02	8.9	0.1	Խաղող՝ թարմ կամ չորացրած	0806	Այլ բանջարեղեն՝ սմբուկ, դդում, ձիթապտուղ, ծնեբեկ եւ այլն	0709
Էլեկտրասարքավորումների, էլեկտրական եւ օպտիկական սարքավորումների արտադրություն	26-27	8.6	0,0	Մասեր՝ ռադիոէլեկտրոնային ապարատուրայի համար նախատեսված	8529	Մառը կատողով էլեկտրոնային լամպեր եւ խողովակներ՝ ջերմակատողով կամ լուսակատողով	8540

Գործունեության տեսակը	ՏԳԴ ծածկագիրը (ՕԸԴՎՀ)	Ներուժը՝ ըստ գործունեության տեսակի, սկն ԱՄՆ դոլար	Երրորդ երկրներից ԵԱՏՄ ներմուծման ներուժի մասնաբաժինը, տոկոս	Ապրանքային խումբը՝ բացարձակ ծավալի մասով առաջատար		Ապրանքային խումբը՝ երրորդ երկրներից ԵԱՏՄ ներմուծման ներուժի մասնաբաժնի մասով առաջատար	
				Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Անվանումը/ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Օգտակար հանածոների արդյունահանում՝ բացի վառելիքաէներգետիկ ռեսուրսներից	07-09	6.7	0,4	Կապարի հանքաքարեր եւ խտահանքեր	2607	Կապարի հանքաքարեր եւ խտահանքեր	2607
Չկնորսություն, ձկնաբուծություն	03	0,4	0.0	Չուկ՝ թարմ կամ պաղեցրած	0302	Չուկ՝ թարմ կամ պաղեցրած	0302

Անդամ պետությունների համար Միության ներքին շուկա մատակարարումների մեծացման էական ներուժ ունեն հետեւյալ դիրքերը (առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 18)՝

*Հայաստանի Հանրապետության համար՝* «Համակարգչային եւ տեղեկատվական ծառայություններ», «Գինի՝ խաղողի, բնական, խաղողի քաղցու», «Մասնավոր անձանց մատուցվող ծառայություններ եւ մշակույթի ու հանգստի ոլորտի ծառայություններ» (երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման 0,4-0,6 տոկոս մասնաբաժնով):


*Քելառուսի Հանրապետության համար՝* «Այլ գործնական ծառայություններ», «Անվադողեր եւ դողածածկեր» ու «Բուլդոզերներ, ուղեհարթիչներ, էքսկավատորներ» (երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման 1,2-2 տոկոս մասնաբաժնով):

*Ղազախստանի Հանրապետության համար՝* «Ֆեռոհամահալվածքներ» (երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման մասնաբաժնով՝ 4,3 տոկոս), քիմիական արդյունաբերության ապրանքներ (առաջին հերթին՝ ածխաջրածիններ՝ ացիլիլի, երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման 3 տոկոս մասնաբաժնով):


*Ղրղզստանի Հանրապետության համար՝* «Հեռահաղորդակցության ծառայություններ» (երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման մասնաբաժնով՝ 0,9 տոկոս), գյուղատնտեսական ապրանքներ (առաջին հերթին՝ խաղող եւ բանջարեղեն, երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման 0,1-0,4 տոկոս մասնաբաժնով):

Ռուսաստանի Դաշնության համար՝ «Տրանսպորտային ծառայություններ» (երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման մասնաբաժնով՝ 5,9 տոկոս), «Խողովակներ, փողակներ եւ սնամեջ տրամատներ՝ եռակցման կամ զամած, սեւ մետաղներից» (երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման մասնաբաժնով՝ 40 տոկոս), «Էլեկտրաէներգիա» (երրորդ երկրներից փոխարինվող ներմուծման մասնաբաժնով՝ 59 տոկոս):

Ելնելով անդամ պետությունների տնտեսությունների չափերից եւ կառուցվածքից՝ Միության ներքին շուկա մատակարարումների ավելացման ընդհանուր էֆեկտում եւ գործունեության տեսակների մասով արդյունքներում դրանց ներդրումը տարբերվում է (տե՛ս նկար 14, նկար 15):



Նկար 14. Ներքին շուկա ապրանքների եւ ծառայությունների մատակարարումների աճի ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ներդրումը՝ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ երկրի մասնագիտացման հաշվին



Նկար 15. Ներքին շուկա ապրանքների և ծառայությունների մատակարարումների աճի ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ներդրումը՝ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ երկրի մասնագիտացման հաշվին՝ ըստ գործունեության տեսակների

Միությունում գործունեության տեսակների մասով՝ ընդհանուր առմամբ, ներքին շուկա մատակարարումների աճի ամենամեծ հեռանկարն ունեն տրանսպորտային ծառայությունների ոլորտը, ֆինանսական ծառայությունների ոլորտը և արդյունաբերության մետալուրգիական ճյուղը: Առանձին երկրների համար հեռանկարային է էլեկտրաէներգիայի մատակարարումների (Ռուսաստանի Դաշնություն), քիմիական արդյունաբերության (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն) և մեքենաշինական արտադրանքի (Բելառուսի Հանրապետություն) ավելացումը:

Սույն զեկույցին կից 1-ին հավելվածում ներկայացված են տնտեսության այն ոլորտների սահմանման մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքները, որոնք

ԵԱՏՄ-ում մասնագիտացման հաշվին ունեն ներքին շուկա մատակարարումների մեծացման ինտեգրացիոն ներուժ, դասակարգված են ըստ գործունեության տեսակների, այդ թվում՝ նշելով առաջին երեք տեղերը զբաղեցնող մանրամասնեցված ապրանքային դիրքերը (աղյուսակներ 12-13):

#### **2.4. Միության «Ապագայի ճյուղերը»**

«Ապագայի ճյուղերի» շուկաները ներկայումս ձեւավորված չեն, ինչը բարձրացնում է ԵԱՏՄ անդամ պետությունների՝ դրանցում սեփական շուկան զբաղեցնելու հնարավորությունները: «Ապագայի ճյուղերում» ինտեգրացիան թույլ կտա էական տնտեսական էֆեկտ ստանալ՝ անդամ պետությունների նորարարական ազգային քաղաքականությունների համակարգման եւ ԵԱՏՄ-ի՝ ԳՀՓԿԱ-ի մասով՝ գիտատեխնոլոգիական զարգացման առումով առաջատար երկրների հետ համագործակցության խորացման հաշվին:

Մեթոդիկայի հիմնական գաղափարը ԵԱՏՄ անդամ պետությունների, գիտատեխնոլոգիական զարգացման առումով առաջատար երկրների, ԳՀՓԿԱ-ում ներդրումների մասով առաջատար կազմակերպությունների, խոշոր վենչուրային ֆոնդերի գիտատեխնոլոգիական զարգացման համատեղ առաջնահերթությունների ցանկի որոշումն է:

Այնուհետեւ ներկայացված են մեթոդիկայի տրամաբանությունը եւ դրա ապրոբացիայի արդյունքները:

Առաջին քայլում, անդամ պետությունների եւ Միության նորմատիվ իրավական բազայի վերլուծության հիման վրա ձեւավորվում է ԵԱՏՄ-ի գիտատեխնոլոգիական զարգացման համատեղ առաջնահերթությունների ցանկը, որն «ապագայի ճյուղերի» ընդհանուր դասակարգիչ է: Ընդհանուր դասակարգչի համար հիմք է ընտրվել Ռուսաստանի Դաշնության՝ մինչեւ 2030 թվականը գիտատեխնիկական զարգացման կանխատեսումը, որը ներառում է անդամ պետություններում «ապագայի ճյուղերի» առավել մանրամասնեցված ցանկը՝ 7 խոշորացված հեռանկարային արտադրանքի խմբեր եւ 444 նորարարական

արտադրանքի եւ ծառայությունների մանրամասնեցված խմբեր, ընդ որում՝ առանձնացվում են ներդրման 4 մակարդակ (1-ին մակարդակ՝ մեծ քանակով տարբեր արտադրանքներ եւ ծառայություններ միավորող առավել ընդհանուր խմբեր, 4-րդ մակարդակ՝ առավել մանրամասնեցված եւ նեղ մասնագիտացված խմբեր):

Ընտրված ազգային/վերազգային նորմատիվ իրավական ակտերի վերլուծությունն անցկացվել է յուրաքանչյուր անդամ պետության համար առանձին: Նախնական դասակարգչում անդամ պետության դիրքի բացակայության դեպքում նշված դիրքը դրանում ավելացվել է մանրամասնման համապատասխան մակարդակում:

*Օրինակ*, Ղազախստանի համար առանձնացվել են մանրամասնման տարբեր մակարդակներ ունեցող նորարարական արտադրանքների եւ ծառայությունների 32 առաջնահերթ խմբեր (1-ից մինչեւ 4-րդ մակարդակ): «Տեղեկատվական անվտանգություն» խումբը չի ներկայացվել նախնական դասակարգչում եւ ավելացվել է «1. «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ» խմբում՝ «1.13» ծածկագրով:

Նախնական դասակարգչի համար աղբյուր են հանդիսանում նաեւ Եվրասիական միջկառավարական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 9 որոշմամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունները»: Դրանց վերլուծությունը թույլ է տվել հայտնաբերել նորարարական արտադրանքների ու ծառայությունների լրացուցիչ խմբեր՝

կոգնիտիվ տեխնոլոգիաներ, արհեստական ինտելեկտի տեխնոլոգիաներ,  
քվանտային տեխնոլոգիաներ:

Երկրորդ քայլում, «ապագայի ճյուղերի» ստացված ցանկի թարմացում է կատարվում՝ հաշվի առնելով գլոբալ գիտատեխնոլոգիական զարգացման հիմնական դերակատարների առաջնահերթությունները: Այդ նպատակով անցկացվել է ռազմավարությունների վերլուծություն հետեւյալի առնչությամբ՝<sup>33</sup>

<sup>33</sup> Մեթոդիկայի ապրոբացիայի շրջանակներում էական աշխատատարության հետևանքով չեն ուսումնասիրվել ամենախոշոր վենչուրային ֆոնդերի առավելությունները՝ իմունոգենետիկայի, կենսաինֆորմատիկայի և նոր

- ԳՀՓԿԱ-ում ներքին ծախսերի մասով համաշխարհային առաջատար երկրների գիտատեխնոլոգիական զարգացման (ԱՄՆ, Չինաստան, Ճապոնիա, ԳԴՀ, Կորեայի Հանրապետություն, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա),

- ԳՀՓԿԱ-ում ամենաբարձր ծախսերն ունեցող առաջատար համաշխարհային կազմակերպությունների (մեթոդիկան ապրոբացվել է «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ» եւ «Կենսատեխնոլոգիաներ» խմբերի համար, այդ թվում՝ ուսումնասիրվել են հետեւյալ կազմակերպությունները՝ Google, Intel, Microsoft, Siemens, Samsung Electronics, Basf, Dupont, Dow Chemical, Monsanto, Sanofi եւ այլն):

Համաշխարհային առաջատար երկրների առաջնահերթությունների վերլուծության ժամանակ հայտնաբերվել է «ապագայի ճյուղերը» ընդհանուր դասակարգչում չներկայացված «Smart City՝ «Խելացի քաղաք»» խումբը, որը, սակայն, առանձնացվել է որպես առաջնահերթ դիտարկվող 7 երկրներից 4-ի փաստաթղթերում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա եւ ԳԴՀ):

Կազմակերպության առաջնահերթությունների վերլուծության ժամանակ դրանցից երկուսի համար (Merk ու Sanofi) առանձնացվել է նորարարական արտադրանքների եւ ծառայությունների խումբ, որը չի ներկայացվել «խմունոգենետիկայի, կենսաինֆորմատիկայի եւ նոր աղյուվանտների տեխնոլոգիաների օգտագործմամբ մշակվող բարձր արդյունավետություն ունեցող պատվաստանյութեր» ընդհանուր դասակարգչում:

Վերը նշված դիրքերն ավելացվել են «ապագայի ճյուղերը» ցանկում:

Միության «ապագայի ճյուղերի» վերջնական ցանկը կազմվում է ընդհանուր դասակարգչում «ապագայի ճյուղերի» ռանգավորմամբ՝ կախված այն փաստից, թե գիտատեխնոլոգիական ոլորտում ռազմավարական դերակատարների ինչ թվի համար է տվյալ դիրքը համարվում առաջնահերթ:

Աղյուսակ 7. Գիտատեխնոլոգիական ոլորտում ռազմավարական  
դերակատարներին հանձնարարված քաշային համակարգը

Համարը՝ ը/կ	Գիտատեխնոլոգիական ոլորտում ռազմավարական դերակատարները	Հանձնարարված քաշերը
1	Միության անդամ պետություններ	1.0
2	Գիտատեխնոլոգիական զարգացման առումով առաջատար երկրները	0.9
3	Գլոբալ տեխնոլոգիական առաջատար կազմակերպություններ	0.7
4	Խոշոր համաշխարհային վենչուրային կազմակերպություններ	0.6

Ծանոթագրություն. աղյուսակում նշված քաշերը կարող են փոփոխվել՝ դերակատարների առանձին կատեգորիաների քաշերն ավելացնելու կամ պակասեցնելու նպատակով:

Ըստ անցկացված վերլուծության արդյունքների՝ ձեռավորվել է «ապագայի ճյուղերի» վերջնական ցանկ, որը պարունակում է նորարարական արտադրանքների եւ ծառայությունների 499 խումբ, ընդ որում՝ դրանց մեկ քառորդ մասը (100 խումբ) հիշատակվում է մեկից ավելի անդամ պետությունների մոտ: Հարաբերական արտահայտությամբ՝ այն խմբերի ամենամեծ թիվը, որոնք հիշատակվում են մեկից ավելի անդամ պետությունների մոտ, կազմում են «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ» եւ «Տրանսպորտային եւ տիեզերական համակարգեր» խոշորացված խմբերը:

Ինչպես անդամ պետությունների մեծ մասի, այնպես էլ գլոբալ գիտատեխնոլոգիական զարգացման մի շարք հիմնական դերակատարների (երկրների եւ (կամ) կազմակերպությունների) համար միաժամանակ առաջնահերթության բարձր մակարդակ ունեցող «ապագայի ճյուղերի» խմբերը հետևյալն են՝

1) տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները, այդ թվում՝

ազատ տեղաշարժվող եւ մարդկանց հետ հաղորդակցվող ռոբոտ-օգնականների արտադրություն,

կրթության տեխնոլոգիաների զարգացում:



2) Կենսատեխնոլոգիաները, այդ թվում՝ սննդային կենսամթերք, բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցներ, գյուղատնտեսության կենսատեխնոլոգիական արտադրանք, ակվակենսամշակույթ:

3) Բժշկությունը եւ առողջապահությունը, այդ թվում՝

ախտորոշման համակարգերի զարգացում,

կենսաբժշկության զարգացում,


դեղամիջոցների մշակում,

ռեգեներատիվ բժշկության զարգացում:

4) Նոր նյութերի եւ նանոտեխնոլոգիաների մշակումը:

5) Ռացիոնալ բնօգտագործումը:

6) Էներգաարդյունավետությունը եւ էներգախնայողությունը, այդ թվում՝ «խելացի» ցանցերի զարգացումը:



\*մեկ բալլից ավելի ռեյտինգ ստացած դիրքերի քանակը

Նկար 16. ԵԱՏՄ «Ապագայի ճյուղերը»

## 2.5. Տնտեսության ոլորտները, որտեղ ինտեգրումը բազմապատկական էֆեկտ է ապահովում անդամ պետությունների եւ առհասարակ Միության համար

Տնտեսության այն ոլորտների որոշման մեթոդիկայի հիմնական գաղափարը, որտեղ ինտեգրումը բազմապատկական էֆեկտ է ապահովում անդամ պետությունների եւ առհասարակ Միության տնտեսությունների համար, այն ոլորտների հայտնաբերումն է, որտեղ ներքին առևտրի աճի ինտեգրացիոն ներուժը (հայտնաբերված ներուժման փոխարինման, արտահանման մեծացման,

մասնագիտացման մասով նախորդ երեք մեթոդիկաներում) միջոյնադային կապերի համակարգի միջոցով ստեղծում է ամենամեծ ներքին պահանջարկը:

Այն հիմնական գործոնները, որոնց վերլուծությունները թույլ են տալիս տնտեսության ոլորտում բազմապատկական էֆեկտի առկայության մասին եզրակացություն անել, հետեւյալն են՝

ա) ներքին առևտրի աճի ներուժը՝ հաշվի առնելով ինտեգրացիոն էֆեկտը,

բ) տնտեսության ոլորտի զարգացման (բացթողման, վերջնական պահանջարկի, զբաղվածության, աշխատանքի վարձատրության, ծախսերի, արտադրողների գնի, ներդրումների) պարամետրերի ազդեցությունը տնտեսության այլ ոլորտների եւ (կամ) առհասարակ անդամ պետության տնտեսության զարգացման վրա:

Գնի եւ ծախքերի դինամիկայի վերլուծության մասով հաշվարկվել է տնտեսության մեկ ոլորտում տարիների կտրվածքով միջինացված՝ ծախքերի ավելացման բազմապատկական էֆեկտն առհասարակ տնտեսության ծախքերի աճի վրա՝ երկրի միջոյնադային բալանսի տվյալների օգտագործմամբ:

Ներդրումների փոխադարձ ազդեցության վերլուծությամբ հայտնաբերվել են, առաջին հերթին, տնտեսության այն ոլորտները, որոնցում ներդրումների աճը կապված է եղել հաջորդ տարում տնտեսության մեջ ներդրումների ամենամեծ աճի հետ, երկրորդ հերթին՝ տնտեսության այն ոլորտները, որոնցում ներդրումների ծավալը փոփոխվում է տնտեսության ներդրումների ամենամեծ ծավալի հետ զուգահեռ: Նաեւ անցկացվել է անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի վերլուծություն, սակայն այն արդյունք չի տվել, քանի որ պաշտոնական փաստաթղթերում բացակայում է այնպիսի հասկացություն, ինչպիսին է «բազմապատկական էֆեկտը»:

Մեթոդիկան ենթադրում է, որ անդամ պետության տնտեսությունում արտահանման (ինչպես նաեւ ներմուծման փոխարինման դեպքում) ապահովման համար հարակից ճյուղերում հնարավորինս պետք է ստեղծվի միջանկյալ արտադրանք: Այսպիսով, հաշվարկելիս համադրվում են երկու էֆեկտներ՝

առաջին հերթին՝ արտահանման ինտեգրացիոն աճը (ինչպես երրորդ երկրներ, այնպես էլ Միության ներքին շուկա) եւ երրորդ երկրներից ներմուծման կրճատումը (ներածական տեղեկություններ հաշվարկման համար),

երկրորդ հերթին՝ այդ ինտեգրացիոն աճով ապահովվող արտադրության աճը (հաշվարկի արդյունքը):

Մեթոդիկայով որոշվում է, թե տնտեսության որ ոլորտներում է այդ երկու էֆեկտների համադրությունն առաջացնում ընդհանուր պահանջարկի ամենամեծ աճը:

Ապրոբացիայի արդյունքում առանձնացվել են տնտեսության հետեւյալ ոլորտները, որոնք առհասարակ Միության համար ստեղծում են էական բազմապատկական էֆեկտ՝

- *մետալուրգիա,*
- *նավթամթերքի արտադրություն եւ քիմիական համալիր,*
- *մեքենաշինություն,*
- *մեծածախ եւ մանրածախ առևտուր,*
- *էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի արտադրություն եւ բաշխում,*
- *օգտակար հանածոների արդյունահանում*

Թվարկված տնտեսության ոլորտները մի կողմից համապատասխանում են ներքին առևտրի աճի հեռանկարին, իսկ մյուս կողմից արտացոլում են անդամ պետությունների տնտեսություններում միջճյուղային կապերը (առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 18):

---

<sup>34</sup>Ռուսաստանի Դաշնությունում այն մեծածախ և մանրածախ առևտրի մասն է կազմում:

1. Մետալուրգիա	2. Նավթամթերքի արտադրություն, քիմիական արտադրություն, ռետինե պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն, այլ ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն	3. Մեքենաշինություն	4. Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոտրանսպորտային միջոցների և կենցաղային նշանակության արտադրատեսակների վերանորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ
3453.4	3247.7	3149.3	2591.7
8. Տրանսպորտ և կապ	7. Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալություն և ծառայությունների մատուցում	6. Օգտակար հանածոների արդյունահանում	5. Էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրություն և բաշխում
1245-3	1277.5	1504.0	1720.9
9. Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն	10. Փայտանյութի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն, ցելյուլոզաթղթային արտադրություն, հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն	11. Շինարարություն	12. Պետական կառավարում և ռազմական անվտանգության ապահովում, սոցիալական ապահովում
546.2	383.9	346.1	293.7
16. Այլ արտադրություններ	15. Կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում, այլ կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	14. Մանածագործական և կարի արտադրություն, կաշվի, կաշվից արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն	13. Սննդամթերքի, այդ թվում՝ ըմպելիքների և ծխախոտի արտադրություն
84.2	119.6	187.6	196.7

Նկար 17. Ըստ բազմապատկական էֆեկտի ծավալի ռանգավորված տնտեսության ոլորտները (մլն ԱՄՆ դոլար)

Միությունում, ընդհանուր առմամբ, էֆեկտում որոշիչ ներդրումը տնտեսության շատ ոլորտներում *Ռուսաստանի Դաշնությանն է* (տնտեսության ոլորտների մասով այն գերազանցում 24 տոկոսը):

*Բելառուսի Հանրապետությունն* էական ներդրում ունի շինարարությունում, գյուղատնտեսությունում, սննդային արդյունաբերությունում, ինչպես նաև կրթությունում և առողջապահությունում (տնտեսության այս ոլորտներից

յուրաքանչյուրի մասով՝ ավելի, քան 38 տոկոս), Ղազախստանի Հանրապետությունը՝ օգտակար հանածոների արդյունահանման ոլորտում (26,5 տոկոս):

*Հայաստանի Հանրապետությունը եւ Ղրղզստանի Հանրապետությունը բոլոր անդամ պետությունների շարքում ամենափոքր ներդրումն ունեն տնտեսության չափերի պատճառով (երկու անդամ պետություններն էլ ամենամեծ ներդրումը կատարում են գյուղատնտեսությունում՝ ավելի, քան 5 եւ 10 տոկոս, համապատասխանաբար, տնտեսության մակարդակով, ընդհանուր առմամբ, այդ անդամ պետությունների ներդրումը կազմում է 1 եւ 3 տոկոս, համապատասխանաբար):*


Գնի եւ ծախքերի դինամիկայի վերլուծության ժամանակ չորս անդամ պետությունների մասով հայտնաբերվել է այն փաստը, որ ամենամեծ բազմապատկական էֆեկտն ունեն օգտակար հանածոների արդյունահանումը, պետական կառավարումը եւ ռազմական անվտանգության ապահովումը, սոցիալական ապահովումը, տրանսպորտը եւ կապը (բացի Ռուսաստանի Դաշնությունից), գյուղատնտեսությունը, որսորդությունը եւ անտառային տնտեսությունը (Բելառուսի Հանրապետություն եւ Ղազախստանի Հանրապետություն):

Ներդրումների փոխադարձ ազդեցության վերլուծությունն անցկացվել է միայն Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ մյուս անդամ պետությունների վերաբերյալ անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով: Հաջորդ տարում տնտեսության ներդրումների ամենամեծ աճի հետ կապված է եղել մեծածախ եւ մանրածախ առևտրի, ավտոտրանսպորտային միջոցների, մոտոցիկլների, կենցաղային նշանակության արտադրատեսակների, անձնական օգտագործման առարկաների, վերանորոգման, ինչպես նաեւ հյուրանոցային եւ ռեստորանային ոլորտներում ներդրումների աճը: Տնտեսությունում առավել մեծ ծավալով ներդրումներին զուգահեռ փոփոխվել է տրանսպորտի եւ կապի ոլորտում ներդրումների ծավալը:

---

<sup>35</sup> Հայաստանի Հանրապետության մասով բացակայում են անհրաժեշտ տվյալները:

Ելնելով անդամ պետությունների տնտեսությունների չափերից եւ կառուցվածքից՝ դրանց ներդրումն ընդհանուր բազմապատկական էֆեկտում տարբերվում է՝ ըստ գործունեության տեսակների (տե՛ս նկար 18):



Նկար 18. Բազմապատկական էֆեկտում անդամ պետությունների ներդրումն ըստ գործունեության տեսակների

Սույն զեկույցին կից 1-ին հավելվածում ներկայացված են առհասարակ ԵԱՏՄ-ի մասով՝ բարձր բազմապատկական էֆեկտ ունեցող տնտեսության ոլորտների որոշման մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքները (աղյուսակ 14):

## 2.6. Տնտեսության՝ Միության ներսում եւ միջազգային արտադրական շղթաներում ընդգրկվելու ներուժ ունեցող ոլորտները

Միության ներսում եւ միջազգային արտադրական շղթաներում ընդգրկված տնտեսության ոլորտների որոշման մեթոդիկայի հիմնական գաղափարն այլ անդամ պետություններ (այլ անդամ պետություններից) (Միության ներսում շղթաներ) կամ երրորդ երկրներ (միջազգային շղթաներ) միջանկյալ արտադրանքի ներմուծման եւ (կամ) արտահանման աճի բարձր ներուժ ունեցող ոլորտների հայտնաբերումն է:

Այն հիմնական գործոնները, որոնց վերլուծությունները թույլ են տալիս եզրակացություն անել արտադրական շղթաներում անդամ պետության մասնակցության հնարավորության մասին, հետեւյալն են՝

ա) ներքին առևտրի աճի ներուժը՝ հաշվի առնելով ինտեգրացիոն էֆեկտը,

բ) ինչպես Միության մյուս անդամ պետություններից (Միության ներսում շղթաներ), այնպես էլ երրորդ երկրներից (միջազգային շղթաներ) միջանկյալ արտադրանքի պահանջարկի եւ առաջարկի վրա արտաքին առևտրի աճի ներուժի ազդեցությունը:

Յուրաքանչյուր անդամ պետության համար արտադրական շղթաներում ընդգրկվելու արդի վիճակը եւ ներուժը հաշվարկվում են միջանկյալ արտադրանքի պահանջարկի եւ արտադրության կառուցվածքի հիման վրա՝ հաշվի առնելով անդամ պետության տնտեսությունում ինտեգրացիայի եւ միջճյուղային կապերի արդյունքում արտաքին առևտրի աճի ներուժը:

Ըստ մեթոդիկայի ենթադրվում է, որ ներքին առևտրի ինտեգրացիոն աճի համար (արտահանման աճ եւ երրորդ երկրներից ներմուծման կրճատում, մասնագիտացման արդյունքում ներքին շուկա մատակարարումների աճ) պահանջվում է արտադրության գործընթացում միջանկյալ արտադրանքի սպառման աճ: Անդամ պետության տնտեսությունում արտահանման (ինչպես նաև

---

<sup>36</sup> Միության ներսում արտադրական շղթաների համար օգտագործվում է Միության ներքին շուկա մատակարարումների աճի ներուժը, իսկ միջազգային շղթաների համար՝ արտահանման աճի և երրորդ երկրներից ներմուծման փոխարինման ներուժի հանրագումարը: Երկրորդ դեպքում փաստացի ուսումնասիրվում է ներքին առևտրի սալթոյի աճը, քանի որ արտահանման աճն առաջանում է ներմուծման կրճատումից:



ներմուծման փոխարինման դեպքում) ապահովման համար հարակից ճյուղերում հնարավորինս պետք է ստեղծվի միջանկյալ արտադրանք: Այսպիսով, հաշվարկելիս համադրվում են երկու էֆեկտներ՝

առաջին հերթին՝ արտահանման ինտեգրացիոն աճը (ինչպես երրորդ երկրներ, այնպես էլ Միության ներքին շուկա) եւ երրորդ երկրներից ներմուծման կրճատումը (ներածական տեղեկություններ հաշվարկման համար),

երկրորդ հերթին՝ այդ ինտեգրացիոն աճով ապահովվող արտադրության աճը (հաշվարկի արդյունքը):

Մեթոդիկայով որոշվում է, թե որ ոլորտներում է այդ երկու էֆեկտների համադրությունն առաջացնում ընդհանուր պահանջարկի ամենամեծ աճը:


Ապրոքացիայի արդյունքում առանձնացվել են տնտեսության՝ արտադրական շղթաներում մասնակցության շնորհիվ հնարավոր զարգացում ունեցող հետեւյալ ոլորտները (առհասարակ Միության համար)՝

#### *Միության ներսում՝*

- նավթամթերքի արտադրություն եւ քիմիական համալիր,
- մետալուրգիա,
- մեքենաշինություն,
- էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի արտադրություն եւ բաշխում,
- օգտակար հանածոների արդյունահանում:

#### *Միջազգային՝*

- մեքենաշինություն,
- մետալուրգիա,
- նավթամթերքի արտադրություն եւ քիմիական համալիր,
- էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի արտադրություն եւ բաշխում,
- օգտակար հանածոների արդյունահանում:



Նկար 19. Միության ներսում եւ միջազգային արտադրական շղթաներում անդամ պետությունների մասնակցությունից ստացվող հնարավոր էֆեկտը՝ ըստ գործունեության տեսակների

Առանձին անդամ պետությունների համար Միության ներսում եւ միջազգային արտադրական շղթաներում մասնակցությունից ստացվող ինտեգրացիոն ներուժն առավել էական է տնտեսությունների հետեւյալ ոլորտների համար (առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 18):

*Հայաստանի Հանրապետություն՝*

միջազգային շղթաների մասով՝ գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն, էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի արտադրություն եւ բաշխում,

Միության ներսում շղթաների մասով՝ գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն, մեքենաշինություն:

*Բելառուսի Հանրապետություն*

միջազգային շղթաների մասով՝ մեքենաշինություն, մետալուրգիա,

Միության ներսում շղթաների մասով՝ մեքենաշինություն:

Մեթոդիկայի պահանջներին համապատասխան՝ բելառուսական կողմն անցկացրել է տնտեսության՝ Միության ներսում եւ միջազգային շղթաներում ընդգրկվելու ներուժ ունեցող ոլորտների վերջնական ցանկի բովանդակային համապատասխանության ստուգում: Ըստ դրա արդյունքների՝ առաջարկվել է վերջնական ցանկը լրացնել գործունեության հետեւյալ տեսակներով՝

- *նավթամթերքի, քիմիական մանրաթելերի եւ թելերի արտադրություն,*
- *ավտոմոբիլային դողերի արտադրություն,*
- *գործվածքների արտադրություն,*
- *NPK-պարարտանյութի արտադրություն:*

#### *Ղազախստանի Հանրապետություն՝*

միջազգային շղթաների մասով՝ մետալուրգիա, օգտակար հանածոների արդյունահանում՝ բացի վառելիքաէներգետիկ ռեսուրսներից,

Միության ներսում շղթաների մասով՝ օգտակար հանածոների արդյունահանում՝ բացի վառելիքաէներգետիկ ռեսուրսներից, գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն:

#### *Ղրղզստանի Հանրապետություն՝*

միջազգային շղթաների մասով՝ մեքենաշինություն, մետալուրգիա,


Միության ներսում շղթաների մասով՝ նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինե եւ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն, գյուղատնտեսություն, որսորդություն ու անտառային տնտեսություն:

#### *Ռուսաստանի Դաշնություն՝*

միջազգային շղթաների մասով՝ մեքենաշինություն, մետալուրգիա,

Միության ներսում շղթաների մասով՝ նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինե եւ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն:

Ելնելով անդամ պետությունների տնտեսությունների չափերից եւ կառուցվածքից՝ արտադրական շղթաներում մասնակցության արդյունքում ընդհանուր էֆեկտում ունեցած դրանց ներդրումները տարբերվում են՝ ըստ գործունեության տեսակների (տե՛ս նկար 20):



Նկար 20. Միության ներսում եւ միջազգային արտադրական շղթաներում մասնակցության արդյունքում ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ունեցած ներդրումներն ըստ գործունեության տեսակների

Մույն զեկույցին կից 1-ին հավելվածում ներկայացված են տնտեսության՝ առհասարակ ԵԱՏՄ-ի մասով՝ Միության ներսում եւ միջազգային արտադրական

շղթաներում մասնակցությունից ստացվող բարձր էֆեկտ ունեցող ոլորտների որոշման մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքները (աղյուսակներ՝ 15-17):

## **2.7 Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտներն ու պետական մասնակցությամբ ընկերությունների բարձր մասնաբաժին ունեցող ոլորտները**

Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտների եւ պետական մասնակցությամբ ընկերությունների բարձր մասնաբաժին ունեցող ոլորտների որոշման մեթոդիկայի հիմնական գաղափարն այն ոլորտների հայտնաբերումն է, որտեղ կառավարությունն անմիջականորեն կառավարում է տնտեսական գործունեությունը: Տնտեսության այդպիսի ոլորտներում ինտեգրացիոն միջոցների մշակումն ու կիրառումը կարող են իրականացվել առավել բարձր տեմպերով եւ կանխատեսվող արդյունքների հավաստիության առավել բարձր մակարդակով:

Մեթոդիկայով ի հայտ է բերվել տնտեսության ոլորտների երկու տեսակ՝

### **1. Տնտեսության՝ պետական մասնակցությամբ ընկերությունների բարձր մասնաբաժին ունեցող ոլորտները**

Պետական մասնակցությամբ ընկերությունների մասնաբաժինները հաշվարկվում են ըստ սեփականություն ձեւերի եւ գործունեության տեսակների՝ ակտիվների մասնաբաժնի հիման վրա՝ ազգային դասակարգիչներին համապատասխան: «Պետական սեփականություն» կատեգորիայի մշակման ժամանակ հաշվի են առնվում սեփականության բոլոր ձեւերը (ծածկագրերը), որոնք պարտադիր կարգով ներառում են պետական սեփականությունը՝ նկատի ունենալով յուրաքանչյուր անդամ պետության իրավական կարգավորման առանձնահատկությունները: Մասնաբաժնի շեմային նշանակությունը որոշվում է պետության կողմից՝ տվյալ տեսակի գործունեության մասով տնտեսական ակտիվության վրա անմիջականորեն ազդելու հնարավորության հիման վրա՝ 25 տոկոս:

---

<sup>37</sup> «Ծախսեր-Բացթողում» աղյուսակի մասով՝ թարմացված պաշտոնական տվյալների ներկայացման դեպքում՝ անդամ պետությունների համար արդյունքները կթարմացվեն:

2. Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտները, այսինքն՝ տնտեսության այն ոլորտները, որտեղ սահմանված են պարտադիր պահանջներ եւ նորմատիվներ՝ ինչպես անմիջականորեն գնագոյացման, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների ֆինանսական եւ վարչական ծախքերի մակարդակի վրա էապես ազդելու մասով:

Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտների մասով՝ ըստ մեթոդիկայի ենթադրվում են անդամ պետությունների նորմատիվ իրավական բազայի վերլուծություն եւ այդ հիմքով տնտեսության այն ոլորտների ցանկի ձեւավորում, որոնցում իրականացվում է պետական կարգավորում: Դիտարկվում են պետական կարգավորման երկու հիմնական մեթոդներ՝

գնագոյացման վրա անմիջական ազդեցությունը (մասնավորապես, սակագների, սահմանային գների սահմանում, գնի ավելացում),

ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների ֆինանսական եւ վարչական ծախքերի մակարդակի վրա ազդեցությունը (մասնավորապես, լիցենզավորման, գրանցման, հավաստագրման, թույլտվությունների տրամադրման համակարգերի ներդրում եւ այլն):

Տնտեսության ոլորտների երկու տեսակների ցանկերը միավորվում են վերջնական ցանկում, որն իսկ ձեւավորում է տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտների ցանկը՝ առհասարակ Միության համար: Տնտեսության ոլորտների դասակարգումն իրականացվում է տնտեսության յուրաքանչյուր ոլորտի բալլային գնահատականի տրամաբան կախված այն բանից, թե ինչ թվով անդամ պետությունների համար եւ ինչ թվով չափանիշներով է ոլորտը ներառված վերջնական ցանկում:

Տնտեսության՝ պետական բարձր մասնակցությամբ ոլորտների հայտնաբերման մասով՝ մեթոդիկայի ապրոբացիան սահմանափակված է հասանելի բաց տվյալներով եւ անցկացվել է միայն Ռուսաստանի Դաշնության

---

<sup>38</sup> Մասնավորապես, ցանկում ներառվում են գործունեության այն տեսակները, որոնցում գործում են պետական մենաշնորհներ:

համար, քանի որ Միության առանձին անդամ պետությունների ձեռնարկությունների կտրվածքով՝ ֆինանսատնտեսական գործունեության որոշ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնի է: Հարկավոր է ստացված արդյունքների վերլուծության ժամանակ հաշվի առնել ապրոքացիայի մասնակի բնույթը:

Ըստ մեթոդիկայի արդյունքների՝ առհասարակ Միության համար պետության առավելագույն ազդեցությունն ի հայտ է եկել տնտեսության հետեւյալ ոլորտներում՝

*սննդամթերքի, այդ թվում՝ ըմպելիքների եւ ծխախոտի արտադրություն,*

*օգտակար հանածոների արդյունահանում,*

*էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրություն ու բաշխում,*

*գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն:*

Տնտեսության նշված ոլորտները կարելի է բաժանել երեք մեծ խմբերի՝

տնտեսության այն ոլորտները, որոնցում գործում է բնական մենաշնորհ (էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրություն ու բաշխում),

տնտեսության այն ոլորտները, որոնց արտադրանքն ու ծառայությունները սոցիալական նշանակություն ունեցող ապրանքներ եւ ծառայություններ են (սննդամթերքի, այդ թվում՝ ըմպելիքների եւ ծխախոտի արտադրություն. գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն. ձկնորսություն, ձկնաբուծություն՝ ենթադրվում են առաջին անհրաժեշտության ապրանքներ),

տնտեսության այն ոլորտները, որոնք բնութագրվում են պետական սեփականության մեծ չափերով (օգտակար հանածոների արդյունահանում):

---

<sup>39</sup> Ընդ որում, անդամ պետությունները կարող են անցկացնել մեթոդիկայի ամբողջական ապրոքացիա, քանի որ վիճակագրական մարմիններն իրենց տրամադրության տակ ունեն դրա համար պահանջվող տվյալները:

### 3. Անդամ պետություններում եւ առհասարակ

#### Միությունում տնտեսության՝ ամենամեծ ընդհանուր ինտեգրացիոն ներուժն ունեցող ոլորտները

Յուրաքանչյուր անդամ պետության համար տնտեսության յուրաքանչյուր ոլորտի մասով ընդհանուր ինտեգրացիոն էֆեկտը որոշվում է հինգ մեթոդիկաների մասով՝ ինտեգրացիոն էֆեկտների գնահատականների գումարման ճանապարհով (տե՛ս սույն զեկույցին կից 1-ին հավելվածը)՝

- ներմուծման փոխարինմամբ,
- երրորդ երկրներ արտահանման մեծացմամբ եւ դիվերսիֆիկացմամբ,
- մասնագիտացմամբ,
- բազմապատկական էֆեկտով,
- արտադրական շղթաներով:

Ռանգավորումը կատարվում է յուրաքանչյուր անդամ պետության համար՝ ընդհանուր ինտեգրացիոն էֆեկտի նվազեցմամբ (որպես տեղեկատվություն՝ հինգ մեթոդիկաների մասով բերվում են էֆեկտների ծավալները): Առհասարակ Միության մասով ցանկը ձևավորվում է բոլոր երկրների էֆեկտները, ինչպես նաեւ յուրաքանչյուր մեթոդիկայի համար էֆեկտները հանրագումարի բերելու ճանապարհով (որպես տեղեկատվություն):

«Ապագայի ճյուղերը» որոշելու մեթոդիկայի ապրոբացիայի արդյունքները չեն կարող ներկայացվել ընդհանուր ցանկում, քանի որ դրանում օգտագործվող դասակարգումը չի կարող բերվել ստանդարտ տեսքի (առարկան նկարագրվում է տեխնոլոգիաների, այլ ոչ թե տնտեսագիտական ոլորտների լեզվով):

Տնտեսության՝ պետության կողմից կարգավորվող ոլորտների որոշման մեթոդիկայի արդյունքները չեն ազդում ընդհանուր էֆեկտի ծավալի վրա (քանի որ չեն կարող ներկայացվել ծավալային ցուցանիշներով), ուստի բերվում են ընդհանուր ցանկում՝ որպես տեղեկատվություն:



ԵՍՏՄ-ի շրջանակներում ինտեգրացիայի արդյունքում տնտեսության՝ ամենամեծ ընդհանուր էֆեկտը ձեւավորող հիմնական ոլորտները հետեւյալն են (կազմում են ընդհանուր էֆեկտի ավելի, քան 60 տոկոսը)՝

*մեքենաշինություն,*

*նավթամթերքի արտադրություն,*

*քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի եւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրություն,*

*մետալուրգիա:*

Առանձին մեթոդիկաների մասով էֆեկտների ներդրումը չի համարվում տնտեսության ոլորտներին համաչափ: Տարբեր էֆեկտները տնտեսության տարբեր ոլորտներում ունեն առավել մեծ կարեւորություն (հինգ մեթոդիկաների մասով՝ ընդհանուր էֆեկտում ներդրման շրջանակներում)՝

*ներմուծման փոխարինում* (չափվում է երրորդ երկրներից ներմուծման կրճատմամբ)՝ մանածագործական արտադրության, կաշվի արտադրատեսակների եւ կոշկեղենի արտադրության, մեքենաշինության ոլորտներում,


*երրորդ երկրներ արտահանման մեծացում*՝ նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի, ինչպես նաեւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրության ոլորտներում, եւ այլ արտադրություններում,

*Միության ներքին շուկա մատակարարումների աճ*՝ մասնագիտացման հաշվին՝ տրանսպորտի եւ կապի ոլորտում,

*բազմապատկական էֆեկտ*՝ (չափվում է բացթողման ծավալների աճով)՝ տնտեսության ոլորտների մեծ մասում (առավել խոշորների շարքում են՝ մետալուրգիայի, էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրության ու բաշխման, առեւտրի, օգտակար հանածոների արդյունահանման ոլորտները),


*արտադրական շղթաներում մասնակցությունից ստացվող արդյունքը* (չափվում է միջանկյալ արտադրանքի պահանջարկի աճով)՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության, էլեկտրաէներգիայի գազի եւ ջրի արտադրության ու բաշխման ոլորտներում:

Միության շրջանակներում *մեքենաշինությունը* համարվում է տնտեսության՝ հինգ մեթոդիկաների արդյունքներից բխող ամենամեծ ընդհանուր ինտեգրացիոն էֆեկտը ստացող ոլորտը, ինչը վկայում է տվյալ ճյուղի զարգացմանն ուղղված համատեղ միջոցների մշակման նպատակահարմարության մասին:



Նկար 21. Ընդհանուր ինտեգրացիոն էֆեկտում հինգ մեթոդիկաների ներդրումն ըստ գործունեության տեսակների

Անդամ պետությունների կտրվածքով էֆեկտների բաժանումը (տե՛ս նկարներ 22-27) ցույց է տալիս, որ ընդհանուր էֆեկտում ամենամեծ ներդրումը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում կարող է ապահովել Ռուսաստանի Դաշնությունը՝ բացառությամբ գյուղատնտեսության, շինարարության, կրթության և առողջապահության (տնտեսության տվյալ ոլորտներում առավել էական ներդրում ունի Բելառուսի Հանրապետությունը):



Նկար 22. Ընդհանուր ինտեգրացիոն էֆեկտում անդամ պետությունների ներդրման ըստ գործունեության տեսակների

Ընդհանուր էֆեկտի տեսանկյունից՝ հեռանկարում *Հայաստանի Հանրապետության համար* տնտեսության առավել կարևոր ոլորտներն են տրանսպորտը եւ կապը (ներմուծման փոխարինման հաշվին), ինչպես նաեւ գյուղատնտեսությունը եւ մեքենաշինությունը, էլեկտրաէներգիայի եւ ջրի արտադրությունն ու բաշխումը (ընդ որում, էլեկտրաէներգիայի արտադրության մասով՝ առկա է երրորդ երկրներ արտահանման աճի էական ներուժ), ինչպես նաեւ բնական գազի բաշխումը (փոխադրումը):

*Բելառուսի Հանրապետությունն* էական ինտեգրացիոն էֆեկտ կստանա նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի, ինչպես նաեւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրության (երրորդ երկրներ արտահանման աճի արդյունքում), մեքենաշինության, մետալուրգիայի, էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրության ու բաշխման ոլորտում:

*Ղազախստանի Հանրապետությունում* ամենամեծ ընդհանուր էֆեկտն արտահայտվում է մետալուրգիայի եւ մեքենաշինության ոլորտում, ընդ որում՝ մեքենաշինության մասով առկա է երրորդ երկրներ արտահանման աճի էական ներուժ: Նաեւ, ըստ տնտեսական գործունեության տեսակների, ինտեգրացիոն ներուժ է հայտնաբերվել հետեւյալի մասով՝ «Նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի, ինչպես նաեւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրություն», «Օգտակար հանածոների արդյունահանում», «Էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրություն ու բաշխում», «Շինարարություն», «Գյուղատնտեսություն, որսորդություն եւ անտառային տնտեսություն», «Տրանսպորտ եւ կապ», «Առեւտուր, ավտոմոբիլների եւ կենցաղային արտադրատեսակների վերանորոգում, հյուրանոցներ ու ռեստորաններ», «Մանածագործական եւ կարի արտադրություն, կաշվից արտադրատեսակների եւ կոշիկեղենի արտադրություն», «Ֆինանսներ, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալություն եւ ծառայությունների մատուցում»:

*Ղրղզստանի Հաստատությունում* ինտեգրացիոն ներուժ է հայտնաբերվել մեքենաշինության, տրանսպորտի եւ կապի ոլորտում՝ հիմնականում ներմուծման

փոխարինման հաշվին, իսկ նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի, ինչպես նաեւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրության եւ մետալուրգիայի ոլորտներում՝ հիմնականում բազմապատկական էֆեկտի ազդեցության արդյունքում:


Ինտեգրացիոն փոխգործակցության զարգացման տեսանկյունից՝ *Ռուսաստանի Դաշնության համար* տնտեսության առավել կարեւոր ոլորտներն են մեքենաշինությունը, մետալուրգիան եւ նավթամթերքի, քիմիական արտադրանքի, ռետինի եւ պլաստմասսայի, ինչպես նաեւ այլ ոչ մետաղական արտադրանքի արտադրությունը:

## Երկրների ինֆոգրաֆիկան

Հայաստանի Հանրապետություն


### 3 առաջատար ապրանքային խմբերը և ծառայությունների կատեգորիաները

Ներմուծման փոխարինում




- Տրանսպորտային ծառայությունները
- Թերապևտիկ դեղամիջոցներ
- Բուլղոզերներ, ուղեհարթիչներ, էքսկավատորներ
- Սյլ դիրքեր

Արտահանման ավելացում



- Ավտոմոբիլների մասեր և պարագաներ
- Էլեկտրական ապարատուրա՝ նախատեսված կոմուտացիայի համար (մինչև 1000Վ)
- Կոշիկներ՝ բնական կաշվից կոշիկերետով
- Սյլ դիրքեր


Մասնագիտացում



- Համակարգչային և տեղեկատվական ծառայություններ
- Գինի՝ խաղողի, բնական, քաղցրահյութ
- Մասնավոր անձանց մատուցվող և մշակույթի ոլորտի ծառայությունները
- Սյլ դիրքեր


**Գործունեության 3 առաջատար տեսակները**

*Բազմապատկական էֆեկտ*



- Գյուղատնտեսություն և ձկնորսություն
- Ֆինանսական գործունեություն և այլ գործնական ծառայություններ
- Շինարարություն
- Այլ դիրքեր

*Ավելացված արժեքի շղթա*




- Գյուղատնտեսություն և ձկնորսություն
- Էլեկտրաէներգիայի, գազի եւ ջրի արտադրություն ու բաշխում
- Նավթաքիմիա, շինարարական նյութերի արտադրություն
- Այլ դիրքեր

Նկար 23. Հայաստանի Հանրապետության տնտեսության՝ ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրականացման համար էական 3 առաջատար ոլորտները


3 առաջատար ապրանքային խմբերը եւ ծառայությունների կատեգորիաները

Ներմուծման փոխարինում



- Էթիլենի պոլիմերներ՝ սկզբնական ձևերով
- Բնակեցիկներ, ֆունգիցիներ, հերբիցիդներ
- Հաշվիչ մեքենաներ և դրանց բլոկները
- Այլ դիրքեր


Արտահանման ավելացում



- Էթիլենի պոլիմերներ՝ սկզբնական ձևերով
- Անվադողեր եւ դողածածկեր՝ օդանշական, ռետինե, նոր
- Պլաստմասսայե սալիկներ, թերթեր՝ ոչ ծակոտկեն եւ ոչ շերտավոր
- Այլ դիրքեր

Բելառուսի Հանրապետություն


Մասնագիտացում




- Այլ գործնական ծառայություններ
- Անվադողեր եւ դողածածկեր՝ օդանշական, ռետինե, նոր
- Բույրոգներ, ուղեհարթիչներ, էքսկավատորներ
- Այլ ոլորտ



Գործունեության 3 առաջատար տեսակները



- Նավթաքիմիա, շինարարական նյութերի արտադրություն
- Մետալուրգիա
- Մեքենաշինություն
- Այլ դիրքեր




- Մեքենաշինություն
- Մետալուրգիա
- Նավթաքիմիա, շինարարական նյութերի արտադրություն
- Այլ դիրքեր

Նկար 24. Բելառուսի Հանրապետության տնտեսության՝ ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրականացման համար էական 3 առաջատար ոլորտները

**3 առաջատար ապրանքային խմբերը եւ ծառայությունների կատեգորիաները**


*Ղազախստանի Հանրապետություն*

Ներմուծման փոխարինում




- Տրանսպորտային ծառայությունները
- Թերապևտիկ դեղամիջոցներ
- Հաշվիչ մեքենաներ և դրանց բլոկները
- Այլ դիրքեր

Արտահանման ավելացում



- Հաշվիչ մեքենաներ և դրանց բլոկները
- Խողովակներ եւ սնամեջ տրամատներ՝ առանց կարի, սեւ մետաղներից
- Գնդիկավոր կամ հոլովակավոր առանցքակալներ
- Այլ դիրքեր


Մասնագիտացում



- Ֆեռոհամահավաճքներ
- Չկան ֆիլե (այդ թվում՝ խճողակը)
- Ածխաջրածիններ՝ ազիկլիկ
- Այլ դիրքեր


**Գործունեության 3 առաջատար տեսակները**

Բազմապատկական էֆեկտ



- Մետալուրգիա
- Օգտակար հանածոների արդյունահանում
- Առևտուր, հյուրանոցներ և ռեստորաններ
- Այլ դիրքեր



Ավելացված արժեքի շղթա




- Մետալուրգիա
- Օգտակար հանածոների արդյունահանում
- Նավթաքիմիա, շինարարական նյութերի արտադրություն
- Այլ դիրքեր

Նկար 25. Ղազախստանի Հանրապետության տնտեսության՝ ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրականացման համար էական 3 առաջատար ոլորտները



3 առաջատար ապրանքային խմբերը եւ ծառայությունների կատեգորիաները



Ղրղստանի Հանրապետություն



**Գործունեության 3 առաջատար տեսակները**




Նկար 26 Ղրղզստանի Հանրապետության տնտեսության՝ ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրականացման համար էական 3 առաջատար ոլորտները

3 առաջատար ապրանքային խմբերը եւ ծառայությունների կատեգորիաները


Ռուսաստանի Դաշնություն

Ներմուծման փոխարինում




- Թեթև մարդատար ավտոմոբիլներ՝ նախատեսված մարդկանց փոխադրելու համար
- Ավտոմոբիլների մասեր և պարագաներ
- Ռոպայիններ և լիցենզային վճարներ
- Այլ դիրքեր

Արտահանման ավելացում




- Թեթև մարդատար ավտոմոբիլներ
- Չողեր՝ երկաթից կամ պողպատից՝ չմշակված
- Անվաղողեր եւ դողածածկեր՝ օդաճնշական, ռետինե
- Այլ դիրքեր

Մասնագիտացում




- Տրանսպորտային ծառայություններ
- Խողովակներ, սնամեջ տրամատներ (պրոֆիլներ)՝ բաց կարով, սեւ մետաղներից
- Էլեկտրաէներգիա
- Այլ դիրքեր

### Գործունեության 3 առաջատար տեսակները



- Մեքենաշինություն
- Մետալուրգիա
- Առևտուր, հյուրանոցներ և ռեստորաններ
- Այլ դիրքեր



- Մեքենաշինություն
- Մետալուրգիա
- Նավթաքիմիա, շինարարական նյութերի արտադրություն
- Այլ դիրքեր

Նկար 27. Ռուսաստանի Դաշնության տնտեսության՝ ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրականացման համար էական 3 առաջատար ոլորտները

Շուկայական տնտեսության մեջ ներմուծման փոխարինման, մասնագիտացման եւ արտահանման աճի խթանման գործընթացներն ավելի շուտ կապված են եւ (կամ) միջնորդ դեր ունեն միմյանց համար: Այդ առնչությամբ, Միության շրջանակներում՝ նշված նպատակներին հասնելուն ուղղված ինտեգրացիոն միջոցները կմշակվեն եւ կուսումնասիրվեն համապարփակ կերպով:


Տնտեսության՝ ներմուծման փոխարինման եւ արտահանման աճի ինտեգրացիոն ներուժ ունեցող ոլորտների ցանկերի համեմատությամբ հայտնաբերվել է տնտեսության *133 համընկնող ոլորտ* (263-ից) կամ *դրանց ընդհանուր թվի մոտ 50 տոկոսը*, ինչը վկայում է արտահանման ուղղվածությամբ ներմուծման փոխարինման ռազմավարության իրականացման մասով՝ ինտեգրացիոն միջոցների իրականացման լայն հնարավորությունների մասին:

Տնտեսության ոլորտների ցանկերը համեմատելիս բոլոր երեք մեթոդիկաների ապրոբացիայի արդյունքներով հայտնաբերվել են *18 համընկնող դիրքեր*:


Ապրանքային դիրքերի եւ ծառայությունների կատեգորիաների կտրվածքով՝ հայտնաբերվել են տնտեսության՝ առավել մեծ ինտեգրացիոն ներուժ ունեցող հետեւյալ ոլորտները (ըստ նշված երեք մեթոդիկաների համար էֆեկտների գումարի, առավել մանրամասն տե՛ս 1-ին հավելվածը)

- *Տրանսպորտային ծառայություններ,*
- *Թեթեւ մարդատար ավտոմոբիլներ՝ նախատեսված մարդկանց փոխադրելու համար,*
- *Անվաղողեր եւ դողածածկեր՝ օդաճնշական, ռետինե, նոր,*
- *Էթիլենի պոլիմերներ՝ սկզբնական ձեւերով:*





